№ 41 ԵՐԵՔՇԱԲԹԻ 25 ՓԵՏՐՎԱՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 25 ՓԵՏՐՎԱՐԻ № 41

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 9 ՌՈՒԲ.
Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը—85 կ.։
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկե նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕՏՕՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամէն օր 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23. тел. 7—92.
(ա.օ.) առ. 977 100—84

ԲԱՑԱՌԻԿ ՌԵԿԼԱՄԻ ՆՊԱՏԱԿՈՎ
ՍԱՐԱՏՕՎԵԱՆ ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՖԱԲՐԻԿԱՆՏՆԵՐ
ԱՌԵՒՏՐ. ՏՈՒՆ „Ե. Ե. ՄԱՅԵՐԻ" ԽԱՆՈՒԹՈՒՄ
Երևանեան հրապարակ, «ԿԱՎԿԱԶ» հիւրանոցի ներքևը, տէլ. № 13—15.
Փետրվարի 21-ից մինչև մարտի 1-ը ս. թ.
Բոլոր ունեցած ապրանքները կը վաճառվեն
ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ
20%-ԻՑ ՄԻՆՉԵՒ 40% ԶԵՂՉՈՎ
Անհրաժեշտ է իւրաքանչիւրին մտնել խանութը և համոզվել ապրանքների իսկական էժանութեան մէջ.
Ցարգանքով՝ Ա/Տ. «Ե. Ե. Մ ա յ է ր»
(ու.կ.ե.հ.) առ. 5 —

Ա Զ Դ
Սրանով յայտնում եմ յարգելի հասարակութեանը, որ յունվարի 1-ից ս. թ.
ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐՈՒՄ, ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅՈՒՄ, №20—21
ԲԱՑԵԼ ԵՄ
ՄԵԾԱԾԱԽՍ ՈՒ ՀԱՏԱԾԱԽՍ
ԽԱՆՈՒԹ
մահուդէ, բրդէ, մետաքսէ, քաթանէ և բամբակէ գործուածքների — Մօսկվայի և արտասահմանեան ֆիրմաներից։
Խորին յարգանքով՝ Ս. Մ. Կիրակօզովի և Բ. Գ. Օհանօվի մահուդեղէն բաժանմունքի նախկին տնօրէն՝
Իլիա Դաւիթովիչ Մամուլաշվիլի
(Նա ինքը Մամուլով)
(և.) առ. 154. 2—2

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւններ ի։
Սրսկումն «606»-ի և «914»-ի։
Ընդունելութիւն ( առ. ժ. 1—2
( եր. ժ. 5—8
Ելիզաւէտինսկայա փ. № 39. տ. Զաղէթեանի։
(չ.ու.կ.) առ. 901. 100—46

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. ԿԷՕՆՃԷԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։
Ընդունելութիւն՝
Ամէն օր ( Առաւօտեան ժ. 9—2-ը
( Երեկոյեան ժ. 4—7-ը
Անկիւն Արտա-Արադսկայա հրապարակի և Լերմոնտօվսկայա փողոցի, № 1.
(ե.հ.կ.) առ. 679. 74—66

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

### ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 և 23 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Տեղեկատու բիւրօն հաղորդում է, որ լրագրական այն տեղեկութիւնները, թէ իբր տարաձայնութիւն գոյութիւն ունի մինիստրների խորհրդի նախագահի և ներքին գործերի ու արդարադատութեան մինիստրների միջև, բոլորովին անհիմն են։

Պետական Խորհրդի առանձին մասնաժողովը որոշեց, որ ամեն տարի ներքին գործերի մինիստրութեան նախահաշւով պէտք է ամենապակասը 20 միլիոն յատկացվի ժողովրդական ժուժկալութեան տարածման համար։ Լրացուցիչ միջոցներ կարելի է խնդրել նախահաշւի կարգով։

Կ. Պոլիսը յայտարարված է ապահով խոլերայից։

Ֆրանսիական դեսպանը մեկնեց արտասահման։

Մամուլի օրինագիծը քննող մասնաժողովում երկարատև վիճաբանութիւններ ծագեցին մամուլի գործերին վերաբերեալ դատարանների կազմակերպութեան մասին։ Գերասիմովը օպպօզիցիայի անունից պաշտպանեց մամուլին վերաբերեալ գործերը երդուեալների դատարանին յանձնելու առաջարկութիւնը։ Հակառակ խօսեց մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կառավարիչը և զեկուցանողը։ Առաջարկութիւնը մերժվեց 13 ձայնով 9-ի դէմ։ Նախնական գրաւման իրաւունքը վերացնելու մասին արած առաջարկութիւնը մերժվեց 14 ձայնով 8-ի դէմ։ Գրաւելու իրաւունքը բացառապէս դատախազին տալը ընդունվեց 13 ձայնով 12-ի դէմ։ 16 ձայնով 10-ի դէմ մերժվեց այն, որ նախնական գրաւում կարելի է միայն անհամեմատ ծանր յանցանքների դէպքում։ Միաձայն ընդունվեց այն առաջարկութիւնը, թէ կարելի է արգելք դնել միմիայն այն գործերի նկատմամբ, երբ պահանջվում է պատիժ ոչ ցածր բանտարկութիւնից։

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ.—«Նազրան» կայարանում մթութեան միջից ինգուշները համազարկերով սպանել են գծի պետ Գոլիցինսկիին սրա կանգնած ժամանակ։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ.—Երկու օր առաջ ծովային փոթորկից յետոյ ահագին ձիւն եկաւ քաղաքում։ Էլէքտրաքարշը չէ գործում։ Երկաթուղագծերի վրա նստել է մեծ քանակութեամբ ձիւն։

ԿԻՇԻՆԵՎ.—Խօտինի գաւառից հաղորդում են, որ Ամերիկայում տիրող արդիւնաբերական ճգնաժամի պատճառով շատ գաղթական-գիւղացիներ վերադարձել են։

ՊՕԼՏԱՎԱ.—Զէնկովի գաւառի Օպօշնա գիւղում հասարակական համախօսականով որոշված է փակել ոգելից ըմպելիքներ վաճառող բոլոր աքցունի և մասնաւոր պանդոկները։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ.—Օրլօվօ-Ելենովկա հանքում մի բանւորի անզգուշութեան պատճառով պայթում եղաւ. սպանվեցին 24 բանւոր, 2-ին ուշքի բերին, մէկը գտնված չէ։

ԼՕՆԴՕՆ.—Սիլվիա Պանկիւէրստի նոր ձերբակալման պատճառով բազմաթիւ սուֆրաժիստուհիներ, զինված մահակներով, փորձեցին անցնել դէպի Դաունինգստրիդ և բողոքել կառավարութեան առաջ, բայց ոստիկանութիւնը թոյլ չը տուեց։ Ցուցարարները յարձակվեցին ոստիկանների վրա, որոնք ցրեցին ամբոխը։

ԼՕՆԴՕՆ.—Վախճանվեց նաւթային արդիւնաբերութեան յայտնի պիօնէր Ալֆրէդ Սիւարտը, որ կապեր ունէր անգլօ-ռուսական նաւթային ընկերութիւնների հետ։

ԲԵՐԼԻՆ.—Երէկ առաջին անգամ խօսակցութիւն եղաւ Ֆրանկֆուրտի և Միլանի միջև հաստատված հեռախօսով։ Խօսակցութիւնը շատ պարզ էր։ Մտադրութիւն կայ հեռախօսը շարունակել մինչև Բեռլին։

ՀՌՈՄ.—Առաւօտեան ժամը 5-ին գնացքի մէջ Նիցցայից Պետերբուրգ գնալիս յանկարծամահ եղաւ սրտի պայթումից ծովային գեներալ-շտաբի պետ իշխ. Լիվէնը։

ՀՌՈՄ.—Պատգամաւորների պալատը ձեռնարկեց Լիվիայի վրա կատարված ծախքերի օրինագծի յօդուածային քննութեան։ Սօցիալիստները բանաձև առաջարկեցին՝ դիմելու հերթական գործերին, հրաւիրելով կառավարութեանը նշանակել քննիչ մասնաժողով, սակայն առաջարկութիւնը չընդունվեց։ Պալատը հաւանութիւն տուեց 231 ձայնով ընդդէմ 47-ի կատարված ծախքերին և համաձայնեց երկարել մինչև յունիսի 17-ը այն գումարայատկացումները, որոնք հետևանք են ներկայանում Լիվիայի գրաւման։

ՄՈՒԿԴԷՆ.—Զինական տեղեկութիւնների համաձայն, 23-րդ և 27-րդ զօրաբանակների գնդերը ուղարկվում են հարաւ «Սպիտակ գայլերի» դէմ գործող զօրքերին օգնութեան։

ՊԱՐԻԶ.—Ծովային մինիստրը յայտնեց մինիստրների խորհրդում, որ ծովային մեծ վարժութիւնները տեղի կունենան մայիսին։

### ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 փետրվարի

ԹԷՀՐԱՆ.—Այսօր երկու խումբ ժանդարմներ հինգ շվէդ օֆիցէրների հրամանատարութեամբ մեկնեցին—մէկը՝ Սպահան, միւսը՝ Սուլթանաբադ, լօռերի դէմ կռւող զօրամասերին օգնելու համար։

Մայրաքաղաքում մէջլիսի համար ընտրված 15 պատգամաւորների մեծ մասը պատկանում են չափաւոր կուսակցութիւններին։ Դեմօկրատները պարտութիւն կրեցին։

Երեքշաբթի Թէհրան է մեկնում ռուսաց հաւատարմատար Սաբլինը։

ՈՒՐՄԻԱ.—Հաղորդում են, որ մի հարիւրեակ պարսիկ կօզակ, որ ուղարկված էր մանգուրների երկիրը՝ վերջիններին պարսկական իշխանութեանը ենթարկելու համար, ենթարկվեցին յարձակման Տիրկէշի շրջանում։ Կռւի մէջ սպանվեցին 4 կօզակ, վիրաւորվեցին մի օֆիցէր և 3 կօզակ։ Քիւրդերից սպանվեցին Իբրահիմ-աղան և նրա ազգականներից մի քանիսը։

### ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

22 և 23 փետրվարի

ՎԻԷՆՆԱ.—«Կօր. Բիւրօյին» հեռագրում են Դուրացցօյից, որ Ալբանիայի իշխանը կնոջ հետ եկաւ և ընդունվեց ազգաբնակութիւնից ցնծութեամբ։

ԴՈՒՐԱՑՑՕ.—Պրինց և պրինցէսի Վիդը եկան ռազմանաւերի թնդանօթաձգութեամբ և ափին ողջունվեցին հիւպատոսներից, իշխանութիւններից և բարձրաստիճան հոգևորականներից։ Միջազգային վերահսկիչ յանձնաժողովը իշխանութիւնը յանձնեց պրինցին։

Երեկոյեան քաղաքը հրավառված էր։ Երթևեկութիւնը տևեց մինչև ուշ գիշեր։

Ողջունելով Վիդին «Տաւրուս» զրահանաւի վրա, Էսադ-փաշան հաւատ յայտնեց, թէ Վիդը կը ներկայանայ երկրորդ Սկանդէր-բէգ, Ալբանիան կը դառնայ մեծ և կը լինի հայր ալբանների համար։

ԱԹԷՆՔ.—Ամբողջ Կօլօնիա շրջանը յանձնվեց ալբանական ժանդարմէրիային։ Յոյն զօրքերը դիմում են դէպի Լեսսօվիկա։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Պարլամենտը բանալիս թագաւորը, յիշելով անցեալ տարվայ ընթացքում Ռումինիայի ձեռք բերած աջողութիւնների մասին, ասաց, որ զօրքի փայլուն կացութիւնը թոյլ է տալիս կառավարութեանը՝ ձեռնարկել գրութիւնը աւելի ևս բարելաւելու ագրարային քաղաքական բարենորոգումներով, և յարակցեց, թէ Ռումինիան, գտնվելով լաւագոյն յարաբերութիւնների մէջ մեծ պետութիւնների հետ, կը հանդիսանայ խաղաղութեան նեցուկ։

Աջողութեամբ անդամահատվեց Թագուհու աջ աչքը։

Պալատի նախագահ ընտրվեց Ֆերէկիդէս, սենատի՝ Միսսիր։

ԲԵԼԳՐԱԴ.—Թագաւորը ստորագրեց կանոնադրութիւն նոր նահանգների գաղթականութեան մասին։ Բնակութեան իրաւունք ստանում են սերբահպատակներից բոլոր 16—60 տարեկան սերբերը և այլազգի տէրութիւնների սլաւօնները։ Առաւելութիւն տրվելու է հողագործներին և արհեստաւորներին։ Գաղթող ընտանիքը ստանում է 5 հեկտարից ոչ պակաս հողաբաժին, ազատվելով բոլորովին ամեն տեսակ հարկեր վճարելուց 15 տարի շարունակ, որից յետոյ հողը դառնում է գաղթածի սեփականութիւն։ Այն ընտանիքներում, ուր կան 16 տարեկանից մեծ մի քանի տղամարդ, ստանում են կրկին 2 հեկտար իւրաքանչիւր տղամարդուն։

Կառավարութիւնը վճռեց նոր ալբանական տէրութեան վերաբերութեամբ բարեկամական դիրք բռնել և շուտով Ալբանիայի ուշադրութիւնը դարձնել մեծ պետութիւնների այն որոշման վրա, որի համաձայն Սերբիային տրվելու է մուտք դէպի Ադրիատիկ ծովը։

ԲԵԼԳՐԱԴ.—Սկուպշչինայում, ընդհանուր վիճաբանութիւններից առաջ, ֆինանսների մինիստր Պաչուն մատնանշեց, որ բիւջէն աւելացել է նոր երկիրների նուաճման պատճառով. բիւջէի ընդհանուր գումարն է՝ 214.698,000.

ՎԻԷՆՆԱ.—Սերբիայի հետ երկաթուղային հարցերի առիթով բանակցութիւնները վերսկսվեցին։

ՍՕՖԻԱ.—Ազգային ժողովի ընտրութիւնները կայացան ընտրողների մեծ թւի մասնակցութեամբ և լիակատար կարգ ու կանոնով։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱԿԱԹՈՔԱԽՏԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

—

Կիրակի, փետրվարի 23-ին, ցերեկվայ ժամը $12^{1}/_{2}$-ին Թիֆլիսում, Փետրվարի 19-ի փողոցում, «Սպիտակ ծաղկի» ամբուլատօրիային կից բացվեց հակաթոքախտային թանգարան, որ ժողովել է բժշկապետ Ֆ. Ֆէյնէրը։

Թանգարանի համեստ բացումը պատւեց իր ներկայութեամբ կոմսուհի Ելիզավէտա Անդրէևնա Վօրօնցօվա-Դաշկօվան, որ բարեհաճեց նաև 100 րուբլի նուիրել յօգուտ թանգարանի։ Ներկայ էին նաև Թոքախտի դէմ Մաքառող Կովկ. Ընկերութեան նախագահ իշխանուհի Մ. Թումանեան, քաղաքային բժշկա-սանիտարական տեսուչ Կ. Ստեփանեան, մի քանի բժիշկներ, հրաւիրված անձինք և մամուլի ներկայացուցիչներ։

Բացումը տեղի ունեցաւ «Սպիտակ ծաղկի» ամբուլատօրիայի կառավարիչ բժ. Դաւթեանի զեկուցմամբ։ Բժիշկը, ընդգծելով որ հակաթոքախտային թանգարաններ գոյութիւն ունեն համարեա բոլոր մեծ քաղաքներում և շեշտելով առհասարակ հասարակական կազմակերպված օգնութեան վրա, որ անհրաժեշտ է մարդկութեան ահռելի թշնամի՝ թոքախտի դէմ կռւելու համար, կանգ առաւ «Սպիտակ ծաղկի» ամբուլատօրիայի երկամեայ գործունէութեան վրա։ Ամբուլատօրիան բաղկացած է մի ընդունարանից, թանգարանի սենեակից, բժշկի առանձնասենեակից, մի երկրորդ փոքրիկ ընդունարանից ևս, ուր բժիշկը որոշում է հիւանդի թոքախտով վարակված լինելը, լաբօրատօրիայից և թոքախտին ու նրա դէմ կռւելու հասարակական միջոցներին վերաբերող գրականութիւնից։ Հիւանդներին նայում են բժիշկներ՝ Կօլլօվսկայա, Մայէր և Պալիկօվ՝ բժ. Դաւթեանի ընդհանուր ղեկավարութեամբ։ 1913 թ. «Սպիտակ ծաղկի» ամբուլատօրիան այցելել են մօտ 600 հոգի, որոնցից 395-ը երևացել են հիւանդ թոքախտով։ Այստեղ զեկուցանողը մատնանշեց Թիֆլիսի ազգաբնակութեան անկուլտուրական լինելը, որ դրդում է հիւանդին օգնութեան դիմել միայն թոքախտի զարգացած շրջանում։ Միջին թւով ամբուլատօրիան այցելում են օրական 50 հոգի, ըստ մեծի մասին երիտասարդ-թոքախտաւորներ։ Սրսկումների, պատուաստումների և թաղական հոգաբարձուների գործունէութեան շնորհիւ հնարաւոր է եղել բուժել հիւանդների 24%-ին։

Բժ. Դաւթեան տուեց 12 հոգաբարձուների կատարած գործունէութեան նկարագիրը։ Հոգաբարձուները հիւանդութիւնը որոշվելուց յետոյ հիւանդներին տալիս են հարկաւոր դեղերը, աշխատում են ստեղծել նրանց համար կեանքի առողջապահական պայմաններ, հայթայթում են վառելիք ու սնունդ (կաթ, ձու), հիւանդներին տեղաւորում են լուսաւոր սենեակներում և այլն։ Անցեալ տարի հոգաբարձուների խնամքի տակ գտնվում էին 103 մարդ։

Վերջում բժ. Դաւթեան կոչ արեց Թիֆլիսի հասարակութեանը՝ թօթափել իր անտարբեր վերաբերմունքը դէպի թոքախտի դէմ մաքառելու միջոցները խրախուսող մարմինների գործունէութիւնը և յոյս յայտնեց, որ ապրիլի 20-ին, «Սպիտակ ծաղկի» օրը, հասարակութիւնը ամեն կերպ կաջակցէ դրամական հանգանակութեանը։

Ապա բժ. Ֆէյնէրը, խօսելով թոքախտի առաջանալու պայմանների մասին, մէկիկ-մէկիկ ծանօթացրեց ներկայ եղողներին թանգարանում ցուցադրված պատկերների և իրերի հետ։

Այս թանգարանում ամեն մի բժիշկ կարող է բացատրութիւններ տալ թոքախտի մասին ինչպէս հիւանդներին, այնպէս և թոքախտի դէմ մաքառելու գործով հետաքրքրվող առողջ անձանց։ Թանգարանում կան ցուցակներ ու պատկերներ, որոնք ցոյց են տալիս թոքախտից առաջ եկած հիւանդութիւնը, տարածումը և մահացութիւնը զանազան տէրութիւնների մէջ, Անգլիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և Ֆրանսիայում։ Ցուցադրված է, թէ ինչումն է կայանում թոքախտի զարգացումը, թէ ինչպէս պէտք է պաշտպանվել թոքախտից, բժշկվել և այլն։

Հակաթոքախտային թանգարանը, որի աճումը, ի հարկէ, վերին աստիճանի կարևոր է ու ցանկալի, բաց է լինելու ամեն կիրակի ցերեկվայ ժամը 12—3, մուտքն էլ ձրի է։

Ես

### ԱԼ. ՔԻՇՄԻՇԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

—

Երէկ Բագուից Թիֆլիս բերվեց Ալ. Քիշմիշեանի մարմինը։ Կայարանը դիմաւորելու էին գնացել Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը և զանազան հիմնարկութիւնների ու ընկերութիւնների ներկայացուցիչներ։ Մտադրութիւն կայ թաղումը կատարել եկող կիրակի։

—

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը, յարգած լինելու համար ժողովարանի աւագ՝ հանգուցեալ Ալէքսանդր Քիշմիշեանի յիշատակը, կայացրել է հետևեալ որոշումները. 1) Խորհրդի ամբողջ կազմով ներկայ լինել թաղմանը, 2) Ցաւակցութիւն յայտնել հանգուցեալի ընտանիքին և 3)

Պաակի փոխարէն 100 ռուբլի ուղարկել ձրի և էժամագին չորս ճաշարաններին (իւրաքանչիւրին 25-ական ռուբլի) ձրի ճաշ տալու չքաւոր անձանց։

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱՅՈՎ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Պետերբուրգում, հասարակական գործիչների ակումբում ինժ. Ն. Ֆիլկովիչը զեկուցում կարդաց ներկայումս նոր երկաթուղիների մասնաժողովի նիստում քննվող Կովկասեան լեռնաշղթայով երկաթուղի կառուցանելու հարցի մասին։

Զեկուցանողը աւդիտօրիայի ուշադրութիւնը դարձրեց այն հանգամանքի վրա, որ Կովկասեան լեռնաշղթայով երկաթուղի անցկացնելու հարցը չափազանց ձգձգվեց կառուցման սխալ թեզիսների շնորհիւ, որ մշակել է 1895 թ. Սալովի նախագահութեամբ կազմված մասնաժողովը։ Գլխաւոր անշահաւէտ պայման այն պահանջն էր, որպէսզի տոննէլների մուտքերը կառուցանվեն 5000 ֆուտից ոչ աւելի բարձրութեամբ։ Յետագայում մասնաժողովների մէջ տոննէլների մուտքերի բարձրութիւնը կըրկին պակասեցվեց և պահանջվեց շոգու ոյժ գործադրել։ Զեկուցանողը կարծում է, որ տոննէլը կարելի է կառուցանել 6000 ֆուտ բարձրութեամբ, ոյժը լինելու է էլեքտրական, և անհամեմատ համապատասխան կը լինի հետեւեալ ուղղութիւնը՝ Գորի—Բորժոմ—Երզրում։ Այս վերջին ուղղութիւնը առանձնապէս շահաւէտ է ռազմագիտական տեսակէտից։

## ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ԱՆՀԻՄՆ Է

Էջմիածնի տաճարի վերանորոգման (ռեստավրացիայի) առիթով կազմված ճարտարապետների յանձնաժողովի գործունէութեան նկատմամբ վերջերս «Մշակի» էջերում երևացին յօդուածներ՝ մեղադրական և պաշտպանողական։ Յանձնաժողովի գործունէութեան վրա սուր ձգող ակնարկներ եղել են Մոսկվայում կարդացված մի դասախօսութեան ժամանակ և այդ ակնարկներին արձագանք տուեց Շիրվանզադէի նամակը։ Ապա «Հովիտ» շաբաթաթերթի մէջ մեղադրանքներ ուղղեց յանձնաժողովի հասցէին և Բարթուղիմէոս եպիսկոպոսը։ Այդ բոլորը ստեղծեց մի մթնոլորտ, աննպաստ՝ յանձնաժողովի գործունէութեան համար։ Այժմ կարող ենք հաղորդել, որ Գ. Բաշինջաղեանը երէկ մեզ ցոյց տուեց դոկումենտներ, որոնք անհերքելի կերպով ցոյց են տալիս, թէ յանձնաժողովի գործունէութեան վերաբերմամբ աննպաստ կարծիքները միանգամայն անհիմն են և անտեղի։ Այդ դոկումենտները ցոյց են տալիս նաև, որ Էջմիածնի գմբէթի բոլորքում երևան են եկել բազմաթիւ արձանագրութիւններ, անյայտ մինչև այսօր, որոնց գոյութիւնը գուշակվում էր միայն։

Այդ դոկումենտները կը հրատարակենք։

## ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

«Մշակի» կիրակի օրվայ համարում (№ 40) տպված Շիրվանզադէի յօդուածի մէջ, պատկերահանդէսների մասին, մի պարբերութիւն, որ վերաբերում է մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Գաշինջաղեանին, կարող է սխալ մեկնութիւնների առիթ տալ, ուստի խմբագրութիւնս պարտք է համարում յայտնել իր կարծիքը այդ մասին։

Եթէ մեր աշխատակից Շիրվանզադէն այն կարծիքն է կամեցել յայտնել, թէ Գ. Բաշինջաղեանի որոշ պատկերները ինքնուրոյն ստեղծագործական տաղանդի արդիւնք չեն, այլ նմանողութիւն, և իր կարծիքը կամենում է հիմնաւորել այն իրողութեան վրա, թէ և՛ Քուինջին և՛ Բաշինջաղեանը բնութեան մեղմ տեսարանների—խաղաղ ջրի, անդորր անտառների, քնքոյշ լուսնի—նկարիչներ են, մենք չենք կարող համամիտ լինել այդ կարծիքին։

Գ. Բաշինջաղեանի համբաւը, իբրև ինքնուրոյն ստեղծագործական տաղանդի, արդէն վկայված է և հաստատված։ Որոշ նմանողութիւններ, հետևողութիւններ այս և այն տաղանդների մէջ կարող են լինել, մանաւանդ երբ սիւժէտը միատեսակ է, բայց ենթադրել, թէ Գ. Բաշինջաղեան իր ստեղծագործութիւնների մէջ կարող է ֆոտոգրաֆիական նմանող լինել—դրա համար ոչ մի հիմք չունենք, և մեզ թւում է, որ Շիրվանզադէն կամ ուղղակի սխալի մէջ է ընկել կամ այն չէ կամեցել ասել, ինչ որ, իսկապէս, նրա յօդուածի յիշեալ պարբերութեանը տպաւորութիւնն է։

## ԳԱՒԱՌԸ ՀԻՒԾՎՈՒՄ Է

Գիւղական ազգաբնակութեան թիւը տարիներից ի վեր մի քանի անգամ բազմապատկվել է, իսկ նրա վարելահողերի քանակը նոյնը մնալով՝ որակով բաւական նուազել է։ Հողի սակաւութիւնը ստիպել է նրան, տարիների ընթացքում, «օբեզղոլենիկին տեմնելով» անտառը կտրտելով վարելահող դարձնել, որ կարողանայ գոնէ ցամաք հաց ունենալ։ Մեծ տարածութեամբ անտառները վաղուց չքացել են և մնացածներն էլ սպասում են կացնին՝ մարդու ձեռքում։ Գիւղատնտեսութեան մէջ համարեա նորութիւն, բարւոքում չէ մտել բացի անասունների աղբով հողերը պարարտացնելուց։ Արօտատեղերը նախկինից քչացել են, որովհետեւ նրանց մի մասը վարելահողերի է վերածված։

Ազգաբնակութեան աճելուն հետ և եղբայրների անժամանակ բաժանվելը—երկու-երեք եղբայր միասին մնալը բացառութիւններ են դառնում—եղած հողերը մանր բաժինների վերածելը, կեանքի նոր-նոր պահանջները ժողովրդին դրել են ծանր պայմաններում։ Ոչ գիւղասահմաններում ազատ հող կայ և ոչ էլ Կովկասում Ռուսաստանի պէս հողի նորմա, իսկ գանձարանի եղած ազատ հողերն էլ չեն տալիս տեղական ժողովուրդներին, որ հնարաւորութիւն ունենան գաղթավայրեր հաստատել։ Անասնապահութիւնը, կաթնատնտեսութիւնը, մեղուապահութիւնը, թռչնաբուծութիւնը, բանջարաբուծութիւնը և այլն նոյնպէս անդրջրհեղեղեան է։ Տարէ-տարի մարդկանց հետ ժանտում են և եղջիւրաւոր անասունները. օրական 10 ֆունտ կաթ տուող կովը համարվում է կաթնատու կով, իսկ մեծ մասը տալիս է 4—6 ֆունտ կաթ։

Բացակայում է մաքրութիւնը, բժշկական օգնութիւնը, և ծննդաբեր կանանց կողքին տատմէրներն են։ Գիւղից գիւղ գրաստով բեռ տեղափոխելու, ձիով ճանապարհորդելու համար փոքր ի շատէ տանելի ճանապարհ չը կայ։ Աննպաստ տնտեսականի առաջ շշմած գիւղացի մենակ մարդը, աշնանացանը վերջացնելով, գարնանացանը յանձնում է մէկին, տան կառավարելը թողնելով կնոջ, շտապում է Բագու աշխատելու և տան կարիքը լրացնելու։ Նա ամառնամուտին գիւղ դառնալով կրկին լծվում է գիւղական աշխատանքին, մինչև որ մի օր կամ Բագուի ճանապարհին է մնում կամ հողը քաշում, ծննդավայր է բերում։ Իսկ այն հայրերը, որոնք տղայ զաւակներ ունեն, 14—15 տարեկանում ուղարկում են օտարութիւն՝ փող աշխատելու, մարդ դառնալու։

Այդ բոլոր անմխիթարականի մէջ, գիւղերում, ազատ լոյսի պէս՝ աչքի են ընկնում դպրոցները իրանց սկսնակ, անփորձ ուսուցիչներով և կիսամերկ ու խղճուկ, բայց ժիր աշակերտներով։ Գիւղացին դըպրոցից շատ բան չէ ակնկալում։

— Էնքան ինի, որ բախտս մի ղալամ աձիլը սովորի, ուրան պըվագիրը կիրի, մերեգ հէսաբ անիլը սովորի, իրա խէրն ու շառը գիտայ, հերիք ա,—ասում է նա։

Դպրոցներից յետոյ գալիս են գիւղական մանր վարկային և սպառողական ընկերութիւնները։ Առաջինը՝ իր ցոյց տուած օգնութիւնով՝ հաւասար է անապատում ճանապարհորդող ծարաւից տապակվող մարդու չորացած բուկը մի քանի ումպ ջրով թրջելուն, իսկ եղած սպառողական ընկերութիւնները, ժողովրդի տգիտութեան շնորհիւ, չեն բարգաւաճվում և նորերը չեն բացվում։

Կարող, թարմ ոյժերը փախչում են գիւղերից և նրա անտեսութիւնն ու գիւղի գործերը մնում են անկարողներին։

Գուցէ մեզանում գաւառն այլ պատկեր տանար, եթէ մտցվէին մանր զեմստվային հաստատութիւններ, ժողովրդին իրաւունք վերապահվէր ինքն իր ներքին, տեղական, համայնական գործերը կարգադրելու և ամեն բան վերից չը սպասէր. գանձարանի ազատ հողերը տրվէին սակաւահող գիւղացիներին և ոչ հողի համար գլորտող բուն ժողովրդի տեղ Ռուսաստանի խորքերից գաղթականներ տեղափոխէին Կովկաս։

Ժամանակ է մտածելու հողի սակաւութիւնից հիւծվող գիւղական ժողովուրդների մասին և ազատ հողերում բուն ժողովրդի համար նոր գաղթավայրեր հաստատել, հնարաւորութիւն տալով տեղում բնակած ժողովրդին շատ ու քիչ բաւարար տնտեսութիւն ստեղծել, որով նա կարողանայ թէ իր ընտանիքին պիտանի լինել և թէ պետութեան։

Ե. Վարդանեան

Մեղրի

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Նոր հոգաբարձութիւն

Գանձակ, 18 փետրվարի

Քաղաքիս ս. Յովհաննէս եկեղեցու դպրոցի հոգաբարձուները և երէցփոխը հրաժարական տուեցին։ Ընտրվեցին նրանց փոխարէն Մովսէս Եպիսկոպոսեան, Յովսէփ Մելիք-Բէգլարեան, Լևոն Ստեփանեան և Լևոն Մելիք-Մնացականեան, իսկ երէցփոխ Սերգէյ Ալիքեան։ Բոլորն էլ բարձր կրթութեան տէր են, բացի վերջին երկուսից։

Յոյս ունենք, որ նոր ընտրվածները կը ծառայեն իրանց բարձր կոչման, կաշխատեն օր առաջ եկեղեցական շինութեան աւարտումն տալ, որ ահա վեց երկար տարիներից ի վեր մնացել է երեսի վրա ընկած։

Գ. Ք. Թ.

### Տարօրինակ ձմեռ

Նալբանդ (Ալէք. գաւ.), 18 փետր.

Այս տարվայ ձմեռը մեզ մօտ անցաւ կատարեալ աշնան եղանակի նման. ոչ նախկին տարիների առատ ձիւնը տեսանք և ոչ սառնամանիքը։ Դեկտ. և յունվար ամիսներն անգամ ցոյց չը տուին իրանց սովորական խստութիւնները։ Եղանակների տաքութեան նայելով, մարդ կարծում է թէ դեռ սեպտեմբեր ամիսը նոր ենք մտել։ Մի երկու անգամ եկած մի վերշօկաչափ բարակ ձիւնը բոլորովին հալվեց։ Միայն բարձր սարերի կատարներին մնացած ձիւնի նշաններից կարելի է իմանալ, որ ձմրան մէջ ենք ապրում։ Աշնան սկիզբներին խոտի և դարմանի խիստ թանգութիւն էր մեզանում. մի քանի ունեւոր անհատներ սըրտանց ցանկանում էին, որ ձմեռն ծանր լինի, որպէս զի իրանց ունեցած աւելորդ խոտը և դարմանը կրկնակի գնով ծախեն չունեւոր գիւղացիներին։ Սակայն նրանց ծրագիրը ջուրն ընկաւ տաք եղանակների շնորհիւ, անասունների կերի գինը չը բարձրացաւ, այսուհետեւ էլ մեծ յոյս կայ, որ էլ չը բարձրանայ, որովհետեւ արդէն հասել ենք գարնան շեմքին։

Յովհ. Համբարեան

### Գերւած պատանին սպանւած

Ղըլար, 15 փետրվարի

Սրանից 4 տարի առաջ Թերեքի շրջանի տխրահռչակ աբրէկները գերել էին Ղըլարցի վաճառական Բագրատ Աղայեանի 10-ամեայ որդուն։ Չը նայած ձեռք առած բոլոր միջոցներին—անգամ փրկանքը վճարելու պատրաստակամութեան—4 տարվայ ընթացքում հայրը չը կարողացաւ նոյն իսկ տեղեկանալ, թէ ուր և ում մօտ է գտնվում որդին։ Մօտ օրերս գերվածի վշտահար ծնողները հաստատ տեղեկութիւն են ստացել, թէ իրանց զաւակը վաղուց արդէն սպանված է և թաղված՝ այգիները տանող ճանապարհներից մէկում։ Բագրատ Աղայեանը որդու յիշատակը յաւերժացնելու նպատակով նուիրեց Կ. Հ. Բ. Ընկ. Ղըլարի ճիւղին 1000 ռ.։

Գ. Մել.

### Բնութեան պարգևը

Ղալաչա, 19 փետրվարի

Ամսիս 18-ի երեկոյեան սկսեց յորդ անձրև գալ. ամբողջ գիշերը եկաւ և լուսաբացին փոխվեց ձիւնի։

Երաշտի պատճառով ոչ միայն ցորենի գինը բարձրանում էր, այլ և շատերը սկսել էին պարտք անել և առնել եկող տարվայ համար։ Ձիւնը գիւղացիների յուսահատութիւնը ուրախութեան փոխեց։

Երաշտը թէև վնասատու է ամենքի համար, բայց աւելի զգալի է հայկական գիւղերի համար, որովհետեւ հայերը մի թիզ հող իսկ չեն ոռոգում, մինչդեռ թուրքերի հողերի մեծամասնութիւնը ջրովի է։ Երկարատև երաշտից ոչ միայն արտերը չէին բուսնում, այլ և ջրերն էին նուազել, մարդկանց և անասունների խմելու ջուր իսկ չէր ճարվում։ Գիւղացու գունատ և կնճռոտված դէմքի վրա յոյսի նշան երևաց։

Ֆօրստէր

### Ընթացիկ կեանք

Շուշի, 18 փետրվարի

Այս տարի ձմեռը մեզանում շատ մեղմ է անցնում։ Չը կան առաջվայ ցրտերը, ձիւն ու սառնամանիք, չը կայ հողմ և մրրիկ։

Ուրախութիւն, ճաշկերոյթներ, հրաւէրքներ, կեր ու խում—ահա այն բոլորը, ինչ որ մի առանձին եռանդով տեղի ունեցաւ Բարեկենդանի տօներին, որին այժմ յաջորդեց Մեծ պասի միատեսակ կեանքը գոնէ արտաքուստ, ըստ երևոյթին։

Մինչդեռ մի կողմից բուռն չքաւորութիւնը և աղքատութիւնը տարածում է մեզանում իր սգաւոր թևերը, միւս կողմից էլ մեր գեղեցիկ սեռի կոյր հետևողութիւնն է, որ քանդում է մեր ժողովրդի տունը։ Կարծէք ուզում են իրար գերազանցել իրանց պճնասիրութեամբ, զարդարանքով, մօդայական տարազներով։

Ամսիս 1-ին քաղաքագլխի նախագահութեամբ քաղ. դումայի դահլիճում կայացան քաղ. իրաւասուների ընտրութիւնները, որոնք տևեցին առ. ժ. 9-ից մինչև երեկ. ժ. 10-ը։ Գաղտնի քուէարկութեամբ սկսվեցին ընտրութիւնները և տուեցին հետևեալ արդիւնքը։ Ընտրված են 31 հայ և 3 թուրք իրաւասուներ։ Բայց որովհետեւ նրանց թիւը պէտք է լինէր 40, այդ պատճառով ընտրըվածները նահանգապետի կողմից հաստատվելուց յետոյ պէտք է լինի լրացուցիչ ընտրութիւն։

Պօղ. Զաքարեան

### Կեանքը Հին-Նախիջեւանի շրջանում

Հին-Նախիջևան, 17 փետրվարի

Գարուն է. ջերմ ու տաք օրերը յաջորդում են իրար. գիւղական կեանքը շարժման մէջ է. նախիրներն և հօտերը արածում են դաշտերում. հերկում են դաշտերը բամբակի ու գարնանացանի համար. ցանում են գարնանացանը, որը առատ բերք է խոստանում, քանի որ վաղաժամ «հարաւաչ» է, եղանակներն էլ նպաստաւոր։ Խոտերը ծիլեր են արձակել, ծառերի կատարները կարմրել, կոկոնները ուռչել. ձիւնը շերտերով սպիտակին է տալիս միայն շրջապատ լեռնաշղթաների մէջքերի վրա. թաւշանման հացահատիկների արտերը կանաչին են տալիս. պարզ ու ջինջ երկնակամարի բարձունքներից երբեմնապէս սահելով սև անձրևաբեր ամպերը սլանում են հեռուները. ջրում ու աւելում են քաղաքի փողոցները. շուկայում երևում են սեխերը, գինձը, կոտեմը, շրէշը։ Իսկ գիւղերից մի մասում ազգաբնակութիւնը չէ կարողանում հանգիստ սրտով կպչել իր դաշտային գործերին շնորհիւ մի քանի ճարպիկ խանակինների վարմունքի, որոնք իրանց յետին նպատակների համար անպատիժ կերպով կաշեցնելով միամիտ գիւղացիներին պղտոր ջրում ձուկ որսալու՝ վրդովում, թունաւորում են գիւղի խաղաղ կեանքը իրանց բռնած վնասակար ու անպատուաբեր ընթացքով։

Ա. Տ.-Ս.

### Մեր առօրեայ ցաւերից

Զաքաթալա, 19 փետրվարի

Դեռ անցեալ տարի «Մշակի» էջերում յայտնեցի, որ Զաքաթալա քաղաքը վերջապէս կունենայ իր սեփական բժիշկը։ Այդ մասին խնդրված էր փոխարքայից սահմանել այդ պաշտօնը 1913 թ. յուլիսի 1-ից. սակայն երէկ միայն փոխարքայից հաստատման թուղթը ստացվեց. ուրեմն շուտով կունենանք մեր բժիշկը տարեկան 1500 ռ. ռոճիկով։ Այսօր տեղիս հայ և թուրք ժողովրդի ներկայացուցիչները եկան կառավարչի մօտ և խնդրեցին շուտով բժիշկ բերել տալ, որովհետեւ երևան են գալիս տարափոխիկ հիւանդութիւններ և բժշկական օգնութեան խիստ կարիք է զգում ազգաբնակութիւնը։

Երէկվանից սկսել է ձիւն տեղալ։ Կենսական մթերքները խիստ թանգ են. մի զոյգ ձուն գիւղում ծախվում է 5 կ., հաւը՝ 50—60 կ., իւղը 60—65 կ., միսը՝ 17 կ., խոտը 50—55 կ. և այլն ըստ կարգին։

Թուրքաբնակ գիւղերում տասնեակ, հարիւրաւոր խոտի դէզեր ու մարագներ են հրդեհում այս սովի տարին, և ոչ մի հնարաւորութիւն չը կայ առաջն առնելու։ Առևտուրը խիստ ընկած է. վաճառականները իրանց մայից են ուտում, եօլա գնում...

Սօյզադէ

### Եղանակներ մեզանում

Հաղբատ, 19 փետրվարի

Մեզանում կատարեալ երաշտ է։ Ամբողջ ձմեռվայ ընթացքում ոչ ձիւն է եկել, ոչ անձրև։ Մեր սարերը, որոնք ըստ սովորականին ձմեռը մինչև ապրիլ ամիսը ծածկված էին լինում ձիւնի մի արշին խորութեամբ, այս տարի մերկ են նոյնիսկ մի վերշօկ ձիւնից։

Աշնանացանները դեռևս չեն կանաչել, չը նայած որ եղանակները մեղմ են եղել։

Փետրվարի 18-ին տեղաց անձրև, որը գիշերը փոխվեց ձիւնի և 19-ին սկսեց նոյն քաղցր եղանակը։

Մեր հարևան Սանահին և Աքօրի գիւղերում տարածված է երեխաների մէջ բղուռոյց հիւանդութիւնը, որ մեծ թւով զոհեր է տարել, մեծ մասամբ Աքօրի գիւղից։

Մեր շրջակայքում անասունների սաստիկ թանգութիւն է։

Արամայիս Պրանեանց

### Տեղեկատու Արմաւիրի

Արմաւիր, 10 փետրվարի

Առ. 1-ն յունվարի 1914 թւի Արմաւիրի բնակչութեան թիւն է՝ 842 ընտանիք բուն արմաւիրցիներ, օտարաքաղաքացիներ՝ հաստատուն մնացողներ 1792 և ժամանակաւոր՝ 6420 հոգի. գումար՝ 9054 հոգի. մարդահամարով բուն արմաւիրցիներ՝ արակ. 2782 և իգ. 2487, գումար 5269 հոգի. օտարաքաղ. մշտական ապրողներ՝ արակ. 5592 հոգի և իգ. 5740, գումար 11,332 հոգի, ժամանակով ապրողներ 16,276 արակ. և 14,603 իգ., գումար՝ 20,879 հոգի։ 1913 թւին շինվել են հասարակական 1 շինութիւն, մասնաւոր տուն արմ. 165, խանութներ 21. օտարաքաղ. 310 և խանութ 10։

Առ. 1-ն յունվարի տնատեղեր կան բուն արմ. 1516. օտարաքաղ. 2140. բնակարաններ բուն արմ. 2680 և օտարաքաղ. 4312. խուտորներ շինված հասարակական հողերի վրա 8. տիրովի հողերի վրա 118. եկեղեցի և աղօթատուն 11. հասարակական շինութ. 30. հացի մագազին 1, կամուրջ գետի վրայով՝ 1. դպրոցական հաստատութիւն 23։ Սովորողների թիւը 2500 արակ. և 1654 իգ.։ Հիւրանոցներ և տրակտիրներ 12, իջևաններ 25, խմիչքի խանութներ 5, առևտրական մագազիններ և խանութներ բուն արմ. 250 և օտարաքաղ. 490, գումար 740։ Հացի (ընդեղէն) գրասենեակ բուն արմ. 3 և օտարաքաղ. 19։

Z.

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Բագու, 18 փետրվարի

Վերջին մի քանի տարիներում, երբ 1905—6 թւերից յետոյ մեր դարաւոր հարևան թուրքերը զգացին իրանց թերութիւնները, սկսեցին մտածել կեանքի կանոնաւոր ընթացքի մասին և, ուրախալի է ասել, որ այդ ընթացքը գտան կուլտուրական զարգացողութեան մէջ։ Այդ կողմից ոչ միայն Բագուն է աչքի ընկնում, այլ կարծես ղեկավարի դեր էլ է խաղում կովկասեան մահմեդականութեան զարգացման ասպարէզում։

Ներկայումս թուրքական «Սաադեթ» հոգևոր խմբակցութիւնը ունի մի դպրոց, որի աշակերտների թիւը 400—500-ի է հասնում, սակայն կուլտուրայի նոր ձգտողները նիւթականի խիստ նեղութեան մէջ են, որի պատճառով այդ դպրոցին փակման վտանգ է սպառնում։

Դպրոցի նախագահ և տեղացի ժողովրդի մէջ յարգ ունեցող Ախունդ-Մոլլա-Աղա Աղա-Ալի-Զադէն վերջերս թուրք թերթերի մէջ մի կրակոտ կոչ է հրատարակել, որով հրաւիրում է թուրք գիտակից հասարակութեան շտապոյթ օգնութեան հասնել։ Ի միջի այլոց գրում է.

...«Մենք, թուրքերս, յետամնաց ազգ ենք, մեր գոյութիւնը լուսաւորութեան մէջն է գտնվում. միմիայն ուսումնարանը կը փըրկէ մեզ՝ թուրքերիս։ Մենք ամեն կերպ պարտաւոր ենք օգնութեան հասնել այն հիմնարկութիւններին, որտեղից սփռվում է լոյսը։ Եկէք, միացէք և պահպանեցէք գոյութիւն ունեցող դպրոցները, եթէ ցանկանում էք, որ ձեր ապագան լինի հիմնաւոր բառիս բուն իմաստով, որը կախված է ձեր ձեռքերի օգնութիւնից»...

Թուրքական շրջաններում լուսաւորութիւն տարածող «Նաջաթ» ընկերութիւնը որոշել է իր վերջին նիստերից մէկում, որպէս զի իր գործունէութիւնը մասերի բաժանի։ Այդ սեկցիաների մէջ մտնելու են ի միջի այլոց նաև հետևեալները. ա) դպրոցական, բ) թատրոնական, գ) հասարակութեան համար հանրամատչելի դասախօսութիւններ կազմակերպել և դ) գիշերային դասընթացքներ։ Այդ առիթով հրաւիրվելու են ձեռնհաս մարդիկ։

Իւրաքանչիւր ուրբաթ օր, որ թուրքերի կիրակին է համարվում, Թաղիևի թատրոնում թուրքական լեզուով ներկայացում է տեղի ունենում ցերեկով։

Պէտք է ասել, որ Թաղիևի թատրոնը թուրք հասարակութեան մեծամեծ ծառայութիւններ է անում։

Գրօզնիյից «Սադայը Հակ» լրագրին գրում են, որ այնտեղի երիտասարդները շուտ-շուտ ներկայացումներ էին տալիս յօգուտ այնտեղի ռէալական դպրոցի չքաւոր թուրք աշակերտների, որով կարելի էր լինում զարկ տալ ուսման գործին։ Սակայն թղթակիցը գանգատվում է, որ վերջին ժամանակները մի մոլլա է եկել Գրօզնի, որ բաւական ֆանատիկ մարդ է և քարոզում է ոչ միայն ընդդէմ թատրոնի, այլ և կուլտուրայի։ Նա ասում է՝ «միմիայն թերահաւատները կը գնան թատրոն, իսկական մուսուլմանի համար հոգու մեղք է թատրոն մտնելը»։ Այդ երևոյթը խիստ ազդել է թուրք հասարակութեան վրա և վերջին ժամանակները ոչ մի ներկայացում տեղի չէ ունենում, որի պատճառով տուժում են չքաւոր աշակերտները և որոնք զրկված են նպաստից։

Տեղիս թուրքերը կրօնական ազատութիւն են վայելում. նրանց չէ արգելվում կիրակի օրերը խանութները ու գրասենեակները փակել և կեանքն ու առևտուրը սովորական օրերի պէս տանում են, իսկ ուրբաթ օրերը (ջումա) բոլոր խանութները փակ են լինում և ընթացիկ գործերը կանգնեցնում։ Հետևաբար կարողանում են զբաղվել հասարակական-կրթական-լուսաւորական գործերով։

Ս. Գարագաշ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԹԻՖԼԻՍ

✦ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն ծրագրել է Թիֆլիսում գիտական կինեմատոգրաֆ շինել միջնակարգ և ստորին դպրոցների աշակերտութեան համար։ Այդ պատճառով նա դիմել է քաղ. վարչութեան՝ խնդրելով կինեմատոգրաֆի շէնքի համար քաղաքի հողերից 300 քառակուսի սաժէն տարածութեամբ մի հողամաս յատկացնել, և եթէ կարելի է՝ քաղաքի կենտրոնում։ Քաղ. վարչութեան ուսումնարանական յանձնաժողովը միանգամայն համակրանքով վերաբերվեց այդ ծրագրին և որոշեց 272 քառ. սաժէն տարածութեամբ մի հողամաս յատկացնել կինեմատոգրաֆի շէնքի համար։ Այդ հողամասը գտնվում է Նիկոլայեվսկայա փողոցի վրա։

✦ Այսօր, ամսիս 25-ին, Արտիստական Ընկ. դահլիճում կը կայանայ «Рус. Слово» թերթի աշխատակից Սերգէյ Եաբլոնովսկու դասախօսութիւնը անձնասպանների մասին։ Դասախօսութիւնը կը սկսվի երեկոյեան ժամը 8½-ին։

✦ Թոքախտի դէմ կռւող կովկասեան ընկ. վարչութիւնը ներկայումս պատրաստութիւններ է տեսնում «Սպիտակ ծաղկի» տօնի համար։

✦ Քաղ. վարչութիւնը հաւանութիւն է տուել քաղաքային ծառայութեան մէջ գտնվող բժիշկներին՝ կատարելագործութեան համար պարբերաբար գիտական կենտրոնները ուղարկելու։ Այդ միտքը, ինչպէս յայտնի է, յղացվեց քաղ. ֆինանսական և վերստուգիչ յանձնաժողովների մէջ այն ժամանակ, երբ նրանք քննում էին 1914 թւի ելևմտի նախահաշիւը։

✦ Ուսումնարանական յանձնաժողովի անդամ Մ. Զ. Քանանովին յանձնված է մշակել և յանձնաժողովին ներկայացնել մի զեկուցում Խարփուխում յունական դպրոց բանալու մասին։

✦ Ուսումնարանական յանձնաժողովի փետրվարի 21-ի նիստում ինժեն. Զօլինը յայտնեց, որ Շիօեվի դպրոցի յատակագիծը պատրաստ կը լինի մարտի վերջերին։ Իրաւասու Բաբովին յանձնարարված է մի զեկուցում կազմել դպրոցի բացման մասին։

✦ Քաղ. դումայի իրաւասու Ա. Բաբեանը մտադիր է առաջարկել դումային, որ յօգուտ բժշկ. շտապոյթ օգնութեան կայարանի՝ յատուկ տուրք վերցվի տրամվայից և տնատէրերից, որոնք նոր շէնքեր են կառուցանում կամ հները վերանորոգման ենթարկում, որովհետեւ դժբաղդ դէպքերը պատահում են գլխաւորապէս տրամվայի գծերի վրա և շէնքեր կառուցանելու ժամանակ։

✦ Տիկ. Շարաշիձէի դասախօսութիւնը, որ պիտի կայանար փետրվարի 23-ին Ազնուականների թատրոնում, յետաձգվում է մարտի 2-ին։

✦ Զուբալովի ժողովրդական Տան հայկական սեկցիայի կողմից ամառային սեզոնի դերասանական խմբի ռեժիսոր է հրաւիրված դերասան Արմէնեան։

✦ Ժողովրդական համալսարանների ընկ. վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ամենքի, որ ընկ. գործերի համար պէտք է դիմել ընկերութեան գործավար Ա. Գ. Ադամիրզովին, ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 11—12 ցերեկվայ, Կայսերական Կովկ. Գիւղատնտեսական Ընկ. շէնքում։

◆ Երևանցի մի հիւանդոտ ծերունի, Յարութիւն Ղարիբեան անունով, երէկ մտնելով խմբագրութեանս գրասենեակը աղերսեց թերթի միջոցով բարերար անձերի և հիմնարկութիւնների ուշադրութիւնը հրաւիրել իր միանգամայն անել դրութեան վրա։ Ծերունին ունի 5 մանկահասակ երեխայ և կին, որոնք գտնվում են ամենայետին չքաւորութեան մէջ, անց կացնելով յաճախ քաղցած օրեր։ Բնակարանի հասցէն հետևեալն է. VIII քաղաքամաս, Ս. Կարապետի Նրբափողոց (պէրէուլօկ), № 2. Օգնել ցանկացողները նպաստները կարող են ուղարկել նաև խմբագրութեանս գրասենեակին՝ յանձնելու ըստ պատկանելոյն։

◆ Նահանգապետը թոյլատրել է Դաւիթ Մելաշվիլիին Թիֆլիսում հրատարակելու մի շաբաթաթերթ վրացերէն լեզուով և «Լախտի» (Մտրակ) անունով։

### ԿՈՎԿԱՍ

◆ Բագուի քաղաքացի Ա. Բ. Զուբբալյեվ խոստացել է իր հաշւով կառուցել Թուրքական տղայոց արհեստաւորաց դպրոց։ Դպրոցի շէնքը կը կառուցվի «Ջամաղ Սաֆա» ընկ. հողաբաժնի վրա և ծախք կը լինի 10,000 ռուբլի։ Հետաքրքրական է այն հանգամանքը, որ արհեստաւորաց դպրոցը բացողը ոչ թէ ինտելիգենտ կամ հարուստ մի Թուրք է, այլ այն հասարակ մարդկանցից մէկը, որոնք սիրում են Թուրքերի լուսաւորութիւնը։

◆ Կայսերական Կովկասեան Գիւղատն. Ընկ. վիճակագրական բիւրօն տեղեկութիւն է ստացել, որ Շուշու գաւառի Կուրոպատկինօ, Սկօբելևկա, Կոտլեարովկա, Եազլաբենդա, Դիլագարդա, Վէյսալու գիւղերում երևացել են մեծ քանակութեամբ դաշտային մկներ, որ չը տեսնված երևոյթ է ներկայացնում։ Եթէ իր ժամանակին միջոցներ ձեռք չառնվեն մկներին ոչնչացնելու համար, այն ժամանակ նրանց հասցրած վնասը ահագին կը լինի։ Մկներ երևացել են ի միջի այլ տեղերի և Դուշէթի գաւառում։ Գաւառում մկները նոյնպէս սպառնում են բնակչութեան ցանքսերին։

### ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Արտաքին գործերի մինիստր Սազօնովի յաջորդ համարվում է Հարտվիգը, որ վայելում է պանսլավիզմի գաղափարի ակտիվ պաշտպանի հռչակ։

◆ Պետական Դումայի կուլուարներում յամառ լուրեր են պտտվում, թէ շուտով Գորեմիկինը դուրս է գալու մինիստրների խորհրդի կազմից։ Նրա հետ միասին հրաժարվելու են մինիստրներ Կասսօն, Մակլակօվը և Բարկը։ Ինչպէս հաւատացնում են, պրեմիէր նշանակվելու է Պետ. Խորհրդի անդամ Նէյդգարդտը։

◆ Պետ. Դումայի անդամ Բատաէվը բանւորական «Правда Трудъ» լրագրի մի խումբ աշխատակիցների հետ ենթարկվում է դատական պատասխանատուութեան սօցիալ-դեմօկրատիական կուսակցութեանը պատկանելուն համար։

◆ Խարկօվում դասադուլ են արել համալսարանի իրաւաբանական, մաթեմատիկական և բժշկական ֆակուլտէտների ուսանողները, որոնք պահանջում են արձակել իրանց կարծիքով պրօֆօկատոր ուսանող Յարութիւնեանին և ազատել կալանաւորված ուսանողներին։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կասսօն մերժեց մինիստրների խորհրդին զեկուցում ներկայացնել առևտրական դպրոցներն աւարտածներն ընդունելու մասին։

◆ Լուրերի համաձայն, Կիէվի գեն.-նահ. Տրէպօվը նշանակվում է Վարշավայի գեն. նահանգապետ, իսկ Տրէպօվի պաշտօնը տրըվում է ֆինլանդական գեն. նահ. Զէյնին։

◆ Մէնշիկօվը «Н. Вр.»-ում գրում է, թէ Պետերբուրգում բնակութիւն հաստատած չինացիք նպատակ ունեն թունաւորել մայրաքաղաքում ջուրը, օդը և տարածել վարակիչ հիւանդութիւններ...

◆ «Н. Вр.»-ի ասելով, այս տարվայ յունվարին ռուսաց երկաթուղիները տուել են ընդհանուր եկամուտ 70 միլիօն ռուբլի, որ երբեք եղած չէ։

◆ Մաքսիմ Գորկին Մոսկվայից մեկնում է Ցէյլօն կղզին։

◆ Սարատօվի նահանգապետը թոյլ չը տուեց պրօֆ. Չէրնօվին դասախօսութիւն կարդալ... բաղնի մասին։

◆ Մայրաքաղաքի բոլոր առաջադէմ լրագիրները, նոյնիսկ «Н. Вр.»-ն, խստագոյնս յարձակվում են Պետական Խորհրդի այն որոշման դէմ, որով մերժվեց տէրերի և ծառայողների յարաբերութիւնները կանոնաւորելու օրինագիծը։ Լրագիրները մատնանշում են, որ Պետական Խորհուրդը իր որոշմամբ քաղաքական ցոյց կազմեց, ասելով՝ «թողէք ամեն տեսակ յոյսեր բարենորոգումներ ստանալու մասին»։

### ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Փետրվարի 15-ին տեղի է ունեցել Թիֆլիսի վրացի կանանց միութեան առաջին հրապարակային ժողովը։ Բժիշկ Ղամբաշիձէն, որ մի շարք դասախօսութիւններ է կարդալու կանանց միութեան կայանալիք ժողովներում, առաջին դասախօսութիւնը արեց այդ օրը երեխաների առողջապահութեան և ծնողների պարտականութիւնների մասին։ Երկրորդը դասախօսել է նոյն օրը Ալ. Գարսեվանիշվիլին վրացի կանանց անցեալում ունեցած գործունէութեան և ներկայիս ունենալիք նրանց պարտականութիւնների մասին հասարակական ասպարէզներում։ Կանանց միութիւնը նման օգտաւէտ դասախօսութիւններ կազմակերպելու է յաճախակի կերպով իր հրապարակային ժողովներում։

◆ Անցեալ 1913 թ. վրացերէն լեզուով լոյս են տեսել 247 տեսակի զանազան գըրքեր, որոնցից ընդհանուր առմամբ տպված է 476,348 օրինակ։ Սրանցից մանկական 2 գիրք՝ 2200 օրինակ տպված։ Ժողովրդական 48 գիրք՝ 130,900 օրինակ տպված։ Դասագրքեր 12 գիրք՝ 54,100 օրինակ։ Գիտական 44 գիրք՝ 42,014 օրինակ։ Բելլէտրիստիկ. 101 գիրք՝ 177,054 օրինակ և այլն։

◆ Թիֆլիսի գաւառի Մարտզօփի գիւղում բացված սպառողական միութեան խանութը մեծ աջողութեամբ մըցում է տեղական խանութպանների հետ և ստիպում նրանց իջեցնել գները։ Գիւղացիները իրանց համակրական վերաբերմունքով նպաստում են միութեան խանութին կլինապատկել իր ունեցած աջողութիւնը։ Միութիւնը Վրաց Գիւղատնտ. Ընկերութեան միջոցով մատչելի գներով գիւղացիներին մատակարարում է գիւղատնտեսական և երկրագործական զանազան գործիքներ։

◆ Օզուրգէթի գաւ. Նօզա գիւղում գիւղատնտես Անը և Բերէկաշվիլին հիմնել են խաղողի վազերի պատուաստման արհեստը ուսուցանելու կուրսեր տեղային գիւղացիների համար։

◆ Վրաց Գիւղատնտեսական Ընկ. շաբաթաթերթի խմբագրութիւնը Լօնդօնից ստացել է մեքենաներ, որոնց միջոցով հնարաւոր է իմանալ ձուի լաւն ու վատը։

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Փետրվարի 23-ին, Բարօնսկայա փող. № 4 տանը բնակվող Գրիգոր Օձևլօվ յայտնեց ոստիկանութեան, որ իր բացակայութեան ժամանակ իր տնից անյայտ չարագործներ գողացել են 90 ռուբլի արժողութեամբ զանազան իրեր։

◆ Փետրվարի 22-ին ոստիկանութիւնը ձերբակալեց Գօրու գաւառի բնակիչ Նիկօլայ Կեսանաշվիլիին, որը ինքնակամ կերպով վերադարձել էր աքսորավայրից։

## ԳԻՏՈՒԹ. ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

### Արտիստական Թատրոն

Երէկվանից սկսվեցին Բարատովի դրամատիկական խմբի ներկայացումները։

Պէտք է ասել, որ խումբը կազմված է գլխաւորաբար առաջնակարգ ույժերից, որոնք որոշ դիրք ունեն ստեղծած Ռուսաստանի գաւառական խոշոր քաղաքների բեմերի վրա։

Խմբի մէջ կան շատերը, որոնք ծանօթ դէմքեր են Թիֆլիսի թատերասէր հասարակութեան համար։

Դերասանուհիների թւումն է նաև Ե. Մ. Աստրօվա, որը համարվում է հաղւագիւտ տաղանդաւոր դերասանուհիներից մէկը կատակերգութիւնների մէջ։ Աստրօվա մօտանցեալ սէզօնին Կիէվում խաղալով՝ վաստակել է տեղական մամուլի և հասարակութեան համակրանքը։ Աստրօվայի առաջին դէբիւտը տեղի կունենայ այսօր, «Маленькая Шеколадница» կօմէդիայի մէջ։

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

### Կ. ԿԱՈՒՑԿԻԻ ԹԵՐԹԸ Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Գերմանական թէ մասնագիտական ժուրնալները և թէ յայտնի օրաթերթերը (օրինակ՝ «Ֆօսիշէ Ցայտունգ», «Բերլինէր Տագէբլատ», «Դեօտշէ Կուրիէր» և այլն) մատենախօսականներ նուիրեցին Բ. Իշխանեանի առաջին գերմաներէն խոշոր աշխատութեան և բոլորն էլ արտայայտվեցին նպաստաւոր կերպով։

Դրանցից ոմանք անում էին, ի հարկէ, որոշ կէտերի վերաբերեալ իրանց նկատողութիւնները։ Սակայն մի բանում համաձայն են բոլորը անխտիր։ Նրանք համարում են Իշխանեանի գիտական աշխատութիւնը որպէս առաջին աջող փորձը, նուիրված այն վերին աստիճանի կարևոր և նոյնքան բարդ ու դժուարին խնդրին, ինչպիսին է արտասահմանեան էլեմենտների—տարկայական թէ անձնական իմաստով—մատուցած բովանդակ ծառայութիւնը համառուսական ժողովրդատնտեսութեան, սկըսած պատմական հին անցեալից մինչև մեր օրերը։

Վերջերս արտայայտվեց Իշխանեանի գըրքի մասին նաև Կարլ Կաուցկիի յայտնի մարքսիստական շաբաթաթերթը «Neue Zeit», իր № 12, եր. 435—441։ Կուզենայինք այստեղ հաղորդել այդ յօդւածի մի քանի կարևոր կէտերը (մատենախօսն է երկրորդ Պետական Դումայի յայտնի պատգամաւոր Գ. Ալեքսինսկին, որ համարվում է «Neue Zeit»-ի մշտական աշխատակիցը և վերջերս հրատարակել է Պարիզում «La Russie moderne» վերնագրով մի խիստ շահեկան աշխատութիւն)։

Արդի Ռուսաստանի տնտեսական կեանքը համարում է Ալեքսինսկին դեռ ոչ հիմնականօրէն հետազօտված և շատ խնդիրներ տակաւին չը լուծված։ Դրանց շարքին է պատկանում այն հարցը, թէ ի՛նչ դեր է խաղացել և ազդեցութիւն ունեցել արտասահմանեան կապիտալը ռուսական ժողովրդատնտեսութեան մէջ։ Իսկ այդ հարցը խիստ մեծ նշանակութիւն ունի և դարձել էր մի ժամանակ մարքսիստների մէջ գիտական պօլեմիկայի առարկայ։ Օրինակ՝ Կարլ Կաուցկին, գրում է Ալեքսինսկին, վերագրում է օտար կապիտալին Ռուսաստանում հսկայական դեր։ «Կաուցկին բացատրել է նոյնիսկ, որ ռուսական բուրժուազիայի քաղաքական թուլութիւնը հետևանք է մեծ մասով արտասահմանեան կապիտալի գերակշիռ ազդեցութեան ռուսական կապիտալիզմի մէջ»։

Վերջերս մի ռուս մարքսիստ՝ Ա. Ֆինն-Ենօտաեվսկի իր մի մեծ աշխատութեան մէջ («Современное хозяйство Россіи», 1911 թ.) վիճում է Կաուցկիի դէմ և չափազանցված համարում նրա կարծիքը արտասահմանեան կապիտալի ուժեղ ազդեցութեան մասին ռուսական տնտեսական կեանքում։

«Սա մի հետաքրքրական ու կարևոր վէճ է, ոչ միայն տնտեսական գիտութեան տեսակէտից, այլ և գործնական քաղաքականութեան»,—գրում է Ալեքսինսկին։

Սակայն «որպէսզի կարելի լինի լուծել այդ պրօբլեմը,—շարունակում է նա,—մենք կարիք ունենք ճշգրիտ տուեալների, փաստերի, թւերի։ Մենք պէտք է հաստատենք արտասահմանեան կապիտալի տնտեսական գործունէութեան շրջանի ճիշդ սահմանները՝ քանակի և որակի տեսակէտից. կապիտալի բաղկացուցչութիւնը ըստ նրա ծագման վայրի, նրա բաշխումը ռուսական տնտեսական կեանքի զանազան ճիւղերի վրա, փինանսների, արդիւնաբերութեան և այլն»։

«Այս նոյնքան դժուար, որքան և անհրաժեշտ աշխատանքն է ձեռնարկել մարքսիստ Բ. Իշխանեան, որը օտար կապիտալի խաղացած դերին ռուսական պետութեան մէջ նուիրել է գերմաներէն լեզուով մասնագիտական մի երկ։ («Արտասահմանեան տարրերը ռուսական ժողովրդատնտեսութեան մէջ» Բերլին)։ Մենք գտնում ենք այդ աշխատութեան մէջ շատ հետաքրքրական և արժէքաւոր նիւթեր օտար կապիտալի գրաւած դիրքերի և գործունէութեան շրջանի մասին Ռուսաստանում»։

Այնուհետև Ալեքսինսկին բերում է բազմաթիւ ցիտատներ Իշխանեանի գրքից և հաստատում, որ Կաուցկիի (ինչպէս և իր) տեսակէտը «կատարելապէս արդարանում է Իշխանեանի տուեալներով», այսինքն՝ սխալվում է Ֆինն-Ենօտաեվսկին իր հակառակ կարծիքի մէջ։

Միմիայն երկու կէտում համաձայն չէ Ալեքսինսկին Իշխանեանի հետ։ Նա գտնում է, որ Իշխանեանը չափազանցրել է Պետրոս Մեծի շրջանի նշանակութիւնը Ռուսաստանի տնտեսական վերածնութեան մէջ։ Երկրորդ՝ նա չէ ընդունում, որ օտար կապիտալը այն աստիճան ազդած լինի ռուսական բանւորութեան կացութիւնը բարեփոխելու ուղղութեամբ, ինչպէս ապացուցում է Իշխանեանը մանրամասն փաստերով։

Ալեքսինսկին փակում է իր մատենախօսութիւնը հետևեալ խօսքերով. «Մենք չենք կարող շօշափել այստեղ այն բոլոր կարևոր և հետաքրքրական հարցերը, որոնց Իշխանեանը իր շահեկան և նշանակալից երկի մէջ պարզաբանում և յաճախ խիստ մեկնաբանական եղանակով պատասխանում է։ Թէև ես ոչ միշտ բաժանում եմ հեղինակի կարծիքները, այնուամենայնիւ կարող եմ վըստահեցնել, որ Իշխանեանի գիրքը կազմում է մի մեծ քայլ դէպի առաջ՝ լուծելու համար այն գերազանց բարդ պրօբլեմը, ինչպիսին է արտասահմանեան կապիտալի ներգործութիւնը ռուսական ժողովրդատնտեսութեան մէջ։ Նրանք բոլորը, որոնք հետաքրքրվում են այդ պրօբլեմով, պարտաւոր են կարդալ այստեղ մատենախօսված գիրքը»։

V.

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Մոսկվա, 23 փետրվարի

Խորապէս վշտացած այն տեղեկութիւնից, թէ գուցէ նորից էջմիածնի միաբանութեան կազմի մէջ մտնէ Արսէն Ղլտճեանը, որ այնպէս յանդգնօրէն ոտնահարեց բովանդակ հայութեան սրբութիւն սրբոցը, բուռն բողոք ենք յայտնում այդօրինակ անլուր քայլի դէմ և յոյս ունենք, որ այս դառն բաժակը կանցնէ հայ եկեղեցու գլխից։

Յովհաննէս Ժամհարեան, Բաղդասար Արղումանեան, Աւետիս Տէր-Մկրտչեան, Քրիստափոր Յովհաննիսեան, Մուշեղ Քալանթար, Մելքսէթ Տէր-Յակոբեան, Մկրտիչ Բարխուդարեան, Ստեփան Արասխանեան, Ստեփան Տէր-Մկրտչեան, Շխեան, Մելիք-Մարութեան, Վարդանեան, Շիկանեան, Աւետիսեան, Մելիք-Յարութիւնեան, Տէր-Մանուէլեան, Թադէոսեան, Մատթէոս Տէր-Մկրտչեան, Եղիշէ Բաղդասարեան։

### ՄԻ ԱՂԱՒԱՂԵՔ ՓԱՍՏԵՐԸ

«Հորիզոնի» № 33-ի «Նամակ խմբագրութեան» բաժնում մի ոմն, Ժողովական ստորագրութեամբ, զետեղել է մի նամակ փետր. 9-ին Ժողովրդական Տանը տեղի ունեցած Ժողովրդական Համալսարանի Ընկ. ընդհանուր ժողովի մասին, որում պ. Ժողովականը իրան միայն ցանկալի միտումով խըղճութեանը հակառակ տեղեկութիւններ էր հաղորդել։

Ժողովականը հրապարակով մեղադրում է ռուս և վրացի սեկցիաներին, ասելով, որ սրանք նախօրօք համաձայնութեան գալով «հայ սեկցիայի հետ, որ ձայն տան միմեանց, և հայ սեկցիան, համաձայն այդ որոշման, տուեց իր ձայնը ռուսներին և վրացիներին, իսկ վերջինները դրժեցին իրանց խօսքը։ Հետևանքն այն եղաւ,—շարունակում է Ժողովականը,—որ վարչութեան մէջ անցան այնպիսի հայեր, որոնք Ընկերութեան հայ անդամների ցանկութիւնների արտայայտիչը չեն կարող լինել։ «Այս տգեղ խօսքադրժութիւնը—վերջացնում Ժողովականը—յանձնում ենք հասարակութեան դատաստանին»։

Արդ՝ ես իբրև մի հայ անդամը այդ Ընկերութեան, որ ներկայ եմ եղել ժողովներին սկզբից մինչև վերջը, և ի նկատի ունենալով պ. Ժողովականի ասածների թէ աղաւաղված լինելը և թէ տենդենցիօզ բնոյթը, պարտք եմ համարում հրապարակով յայտնել ընթերցող հասարակութեանը, որ «Հորիզոնի» Ժողովականի այդ մեղադրանքը միանգամայն անհիմն է և անպատուաբեր հէնց իրան համար։

Ահա և փաստը.

Յայտնի է որ սեկցիաները բաղկացած են 20 հոգուց, (2—3 աւել պակաս, նշանակութիւն չունի), ուրեմն երկու սեկցիան՝ ռուս և վրացի՝ միասին ապահով կարող էին ունենալ 40 ձայն։ Լաւ։

Յայտնի է նաև, որ հայկական սեկցիայի առաջարկած մի թեկնածուն անցաւ միաձայն, առանց քուէարկութեան, իսկ միւսը՝ քուէարկութեամբ ստացաւ 94 ձայն։

Դրանից պարզ երևում է պ. Ժողովականի ինչ պատող լինելը։

Սակայն աւելի պարզենք։

Եթէ ռուս և վրաց սեկցիաները դրժած լինէին իրանց խօսքը, ապա ինչպէս կարող էր միաձայն ընտրվել հայ սեկցիայի մի թեկնածուն, իսկ միւսը ստանալ 94 ձայն։ Հանեցէք այդ 94-ից 20 ձայնը, 25-ը, թէկուզ 30-ը, որ կարող էր պատկանել հայ սեկցիային, թէև փաստ է, որ հայ սեկցիայում՝ սեկցիայի իսկ առաջարկած վերջին թեկնածուն ունէր հակառակորդներ, կը մնայ տեղը էլի 64 ձայն։ Արդ՝ ում են այդ ձայները, եթէ ոչ ռուս և վրաց սեկցիաներինը։

Բայց այդ դեռ բոլորը չէ։

Պ. Ժողովականի նամակը իր մէջ սուտ պարունակելուց զատ՝ պարունակում է նաև այսպէս ասած պրօվօկացիա։

«... Ընտրութիւնների ժամանակ ռուս և վրացի սեկցիաների վերաբերմունքը հայերիս նկատմամբ խիստ անկօրրէկտ էր»։

Ի՞նչ է ուզում ասել պ. Ժողովականը դրանով։ Ինչպէ՞ս թէ՝ «հայերիս վերաբերմամբ»։ Մի՞թէ այն ընտրվածները հայեր չեն և մի՞թէ մի հայ թեկնածուի անցնելով պիտի ապացուցվէր ռուս և վրացի սեկցիաների կօրրէկտ վերաբերմունքը դէպի հայերս։

Մի աղաւաղէք փաստերը...

Ամօթ չէ՞ միթէ՝ վեր կենալ և այս ակ-աչկարա փաստերից յետոյ հրապարակով այդպիսի մի անտեղի և չեղած մեղադրանք շպրտել մեր ընկերակիցների և հարևանների վրա, երբ նրանց իսկ քուէով ընտրվեցին 5 հայեր, որ հների հետ կազմում են 8-ը, ժող. համալս. վարչութեան մէջ։

Աղաղակող փաստ է, որ եթէ իրօք ռուս և վրացի սեկցիաների մասին ասածի $^{1}/_{100}$-ը ճիշդ լինէր, չէր անցնի և ոչ մի հայ։

Բայց ինչո՞ւ սրա-նրա դուռը ծեծել. չէ՞ որ հայ անդամներից էլ շատերը դէմ էին այդ թեկնածուի անցնելուն, որոնք քուէ տուեցին իրանց ցանկացած անձանց. էլ ինչո՞ւ ուրիշների օձիքից բռնել։

Մաղալուն և ծիծաղելին այն է, որ «Հորիզոնի» Ժողովականի կարծիքով «ընտրված հայերը հայ անդամներիս արտայայտիչը չեն կարող լինել»։

Ինչո՞ւ։ Լեզուներդ չէ՞ վրա գալի որ ասէք՝ թէ ընտրվածները չեն կարող ձեր նեղ հայեացքների թարգմանը լինել, որ աւելի ճիշդն է ու ձեր կաշուից էլ դուրս գալու իսկական պատճառը։

Մոնոպոլիստական ու փոքրաթէչիական մի ձև է, կարծել՝ թէ միայն այն թեկնածուն կարող էր լինել հայ անդամների արտայայտիչը, որը առաջարկում էր հայ սեկցիան, մի ձև, որ վաղուց է հնացել, բայց և այնպէս պ. Ժողովականը գործ է ածում առանց կարմրելու։

Ինչո՞ւ դիմակ հագնել և սար ու ձոր ընկնել. աւելի լաւ չէր լինի, որ ասէիք, թէ որոշ հայեացքների պայքար էր, և ձեր հայեացքը պարտվեց, որը մենք չենք ուրանում։ Ի զուր էք ձեզ միամիտ զգալ ներկայացնում ու ձեր պարտութեան մէջ սեկցիաներին՝ մեղադրում, քանի որ դուք շատ լաւ գիտէք, որ ընդհանուր ժողովը 270 անդամից էր բաղկացած, իսկ երեք սեկցիաները՝ հայ, վրացի, ռուս միասին վերցրած դրա կէսն էլ չէր ներկայացնում. պարզ է, որ ընտրվելու համար պէտք էր, որ ընդհանուր ժողովի կէսից աւելին համակրանքն ու վստահութիւնը գրաւէիք, որոնք չունեցաք։

Այդ, ինչպէս տեսնում էք, ընթերցող, զարմանալի է և մինչև իսկ տարօրինակ, ի հարկէ, բայց աւելի տարօրինակն այն է, որ այդ աղաւաղված ու անպատուաբեր լուրը տպվել է «Հորիզոնում», որի մօտիկ աշխատակիցներից մի քանիսը ներկայ էին այդ ժողովին, որոնք տեղեակ են բոլոր անցուդարձին, սակայն թոյլ էին տուել այդ ստայօդ նամակի երևան գալը։

Կոմենտարիաները թողնելով ընթերցողին, պ. Ժողովականի այդ ազնիւ արարմունքը յանձնում եմ հասարակութեան դատաստանին։

Քուէ տուող

Յ. Գ.—Խնդրում եմ «Հորիզոնի» խմբագրութեանը արտատպել։

Նոյն

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Երզրում, 10 փետրվար

Գրեր էի Ազգանուէր Հայուհեաց Միութեան տեղւս ճիւղի՝ ամերիկեան վարժարանի սրահին մէջ տուած երեկոյթի մասին և ըսեր էի, որ թայֆայական պարոններու խմբակը ներելի և աններելի միջոցներ ձեռք առած էր խանգարելու այդ երեկոյթը, բայց իր քայլերուն մէջ ձախողած էր. և այդ ամենէն յետոյ ալ իր «Յառաջ» թերթին մէջ ինքնարդարացման և Ազգանուէրին պատմական բարեկամ ինքզինքը յայտարարելու յաւակնութիւնը ունեցեր էր... Ժողովրդի աչքին թող փչելու նմանօրինակ կեղծութեան դիմակը պատռելու համար ստիպուած եմ այսօր ձեռք բերած և շատ խնդիրներու վրայ բազմակողմանի լոյս սփռող Երզրումի ուսումնական խորհրդոյ 25 յուն. թիւ 163 գրութեան—ուղղուած նոյն Ընկերութեան ատենապետ տ. Աղաւնի Սարաֆեանի—պատճէնը հոս առաջ բերել։

«Ուսումնական խորհուրդս իր յունվ. 23 թ. և 160 թուահամար պաշտօնագրով մը թէև արտօնած ըլլալով ձեզ յառաջիկայ կիրակի երեկոյեան Սանասարեան սրահին մէջ ներկայացում տալ, սակայն քաղաքիս Հ. Ե. (հայ երիտասարդաց) Միութեան վարիչ մարմնոյ կողմէ խորհրդոյս ուղղեալ վերջին պաշտօնագրին և իր անդամներու բերանացի յայտարարութիւններէն տեղեկանալով, որ այդ առիթով անախորժութիւններ եւ անպատեհութիւններ պիտի պատահին (ընդգծումները մերն են), իր վերջին նիստին մէջ անդրադառնալով խնդրոյն, այս անտեղութեանց առաջքն առնելու նպատակաւ յետ ընդ երկար խորհրդակցութեան խորհուրդս որոշեց, որ յետաձգուի ներկայացումը և սրահին դռները փակուին թէ Ազգանուէրի պատ. գործադիր ժողովի և թէ Երիտասարդական Միութեան վարիչ մարմնոյ առջև ցնոր կարգադրութիւն։

«Հաղորդելով զայս ի գիտութիւն և ի պարտ և ի պատշաճ տնօրէնութիւն՝

«Մնամք դիւան ուսումնական խորհրդոյ՝

«Ատենապետ Ար. Չիլինկիրեան

Ատենադպիր Մ. Մեսրիկեան»

Ուսումն. խորհրդոյ սոյն նամակէն յետոյ, բացատրութիւններու կարիք չի մնար։ Սա միայն պիտի ըսեմ, որ ուսումն. խորհուրդը իր հերթին պէտք չէր տեղի տար դաշնակներու յատուկ նմանօրինակ սպառնալիքներուն։

Իրազեկ

### ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Լիլաւայի Հայկազեան-Թամարեան ուսումնարանի 40-ամեայ յօբելեանը Թաւրիզում

Թաւրիզ, 15 փետրվ.

Քառասուն պատկառելի տարիներ են անցել այն օրից, երբ առաջին անգամ կրթարանի հիմքն է դրվել խղճուկ Լիլաւա թաղում և մինչև այսօր լաւ թէ միջակ քաշ է տուել իր գոյութիւնը՝ կրթութիւն տալով 500 տնւոր թաղամասի երկսեռ մանուկներին։

Մենք միտք չունենք թւելու, թէ ինչպէս և որպիսի ուղղութիւններով է ղեկավարվել դպրոցը. միայն բացարձակ է, որ այդ կըրթարանը փոքր ծառայութիւն չէ մատուցել թաղի մանուկներին, և թէ 500 տնւոր թաղի 400-ի մօտ երկսեռ աշակերտութեան ճակատագիրը կապված է այդ ուսումնարանին, որի խնամարկու թևերի տակ ըստ մեծի մասին չքաւոր ընտանիքների զաւակները պէտք է ստանան մտաւոր սնունդ։

Ուրիշ անգամներ առիթ եմ ունեցել «Մշակի» էջերում բացատրել Լիլաւա թաղի կացութիւնը։ Թաղը հայերով բազմամարդ է և համեմատաբար չքաւոր դասն ապրում է այս թաղում, և ամենից աւելի արժանի է հայ հասարակութեան ուշադրութեանը։

Հոգաբարձական մարմինը՝ ի նկատի ունենալով ուսումնարանի 40-ամեայ պատկառելի հասակը, նրա կատարած ծառայութիւնը և միւս կողմից նիւթական խիստ անձուկ վիճակը՝ որոշեց կատարել դպրոցի յօբելեանը առաջիկայ հոկտ. ամսի 11-ին, Թարգմանչաց տօնի օրը։

Յօբելեանական յանձնաժողով կազմվեց Թաւրիզի առաջնորդարանում, որի նախագահն է պ. Զ. Նազարբէգեան, գանձապահը՝ պ. Թ. Աֆթանդիլեան։ Յօբելեանական յանձնաժողովի անդամները կարող և վստահելի անձնաւորութիւններ են, և յոյս կայ, որ այդ հիմնարկութիւնը ապահովվի շնորհիւ յանձնախմբի ջանքերի և հայ հասարակութեան անկեղծ համակրութեան։

Ի նկատի ունենալով Ատրպատականի այսօրվայ դրութիւնը և յետադէմ կեանքը, որ երկիրը հետզհետէ լեցվում են օտար կուլտուրական տարրեր, շրջապատուած ենք օտար ազգերով ու դպրոցներով, հայ ժողովրդին մնացել է միայն դպրոցն ու կուլտուրան, որի զօրութեամբ պէտք է կարողանայ դիմադրել վերահաս վտանգին։

Թումանեան եղբայրները շինել են հոյակապ դպրոց. հասել է ժամանակը, որ դըպրոցի ուսումնական ապահովութեան համար ևս անտարբեր չը մնան։ Հայ հասարակութիւնը անշուշտ կը փութայ տալ իր աջակցութիւնը։ Բայց մենք մեր կոչն ուղղում ենք մեծ չափով այն Թաւրիզեցիներին, որոնք ձրի սովորելով Արամեան և Թամամշեան-Հայկազեան դպրոցներում և ունենալով հանդերձ բարեկեցիկ վիճակ այս ու այն շահաստաններում՝ իսպառ անտարբեր են դէպի հայրենի կուլտուրական հաստատութիւնները։ Մենք այդպիսիներին ծանօթ ենք և իմանում, թէ որ տեղերումն են նըրանք։ Կրկնում եմ, մեծ չափով ընկնում է դրանց վրա յոբելեարին նպաստելու նուիրական պարտականութիւնը։

Ի դէպ ողջունում ենք Կովկասում պարսկահայերի կազմվելիք ընկերութիւնը և մաղթում աջողութիւն։

Հայկազուն

## ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Վարչական տագնապ

Կ. Պոլիս, 12 փետր.

Թիւրքահայք վաթսուն տարիէ մօտ ժամանակէ մը ի վեր կը կառավարուին սահմանադրական ժողովներով և խուհուրդներով։

Ազգային Իշխանութիւնը ժողովուրդէն բղխած, անոր որոշումներուն ենթարկուած և որոշ պատասխանատւութեանց ու իրաւունքներու տէր մարմին մըն է։

Պարտքի ու իրաւունքի որոշ սահմանագծումներով իրարու յաջորդող այսքան վարչութիւններու մէջ չէր գտնուած վարչութիւն մը, որ այնքան անարգուած ու գզուելի անկում մը ունեցած ըլլար, որքան ունեցաւ արդի վարչութիւնը։

Ազգային ճգնաժամի մը և ամենափափուկ ժամանակամիջոցի մը մէջ գործող ներկայ վարչութիւնը ազգ. ժողովի վերջին գումարման նիստին մէջ մատնուեցաւ վիճակի մը, որուն՝ իրմէ նախորդներէն և ոչ մէկը ենթարկուած էր։

Հոն զինքը ամբաստանեցին, թէ հայկական բարենորոգմանց գործին մէջ պաշտպանած է օսմ. կառավարութեան տեսակէտը, և չհերքուեցաւ այս ծանր ամբաստանութիւնը։

Անիկա ամբաստանեցին, թէ չարաշահութիւններ գործած է։

Թուեցին մի առ մի, թէ ինչպէս Տիրան էֆ. Երկանեան Եօանէսքուի դատը 50 ոսկի վճարումով ստանձնած էր, թէ ինչպէս սրբազան պատրիարքին հետ Թալէաթ բէյի ներկայացած պահուն առիթէն օգուտ քաղելով իր կորսնցուցած մէկ պաշտօնին մէջ վերահաստատուելու համար խնդրամատոյց եղած էր և յաջողած էր, թէ ինչպէս մէբուսական ընտրութեան համար պատրիարքարանի թաքրիրը մատուցած ատեն Թալէաթ բէյի հաճելի երևալու համար՝ յայտնած էր, թէ ինքը համամիտ չէր անոր բովանդակութեան, և ուրիշ շատ մը ամբաստանութիւններ, որոնց իրական ըլլալը հաստատուեցաւ յատենի ժողովոյ վարչութեան անդամներու ըրած յայտարարութիւններով և խոստովանութիւններով։

Սակայն դաշնակցական երեսփոխանները իրենց ազատական հետևորդներով—վասնզի էջեր ունէին քշելիք ի ձեռն... այս ապիկար վարչութեան—ամեն ձեռնարկ ըրին անոր կեանքը 8 թէ 10 օր երկարաձգելու համար։

Եւ առաւ երկու շահ մէկէն ըրած կըլլային։ Ոչ միայն ընտրական պայքարին մէջ հլու կամակատար վարչութիւնը պահած կըլլային ձեռքի տակ, այլ պաշտպանած կըլլային իրենց ընկերներէն և համակիրներէն բաղկացեալ վարչութիւն մը՝ որքան որ ալ անիկա ապիկարած ըլլար։

Եւ ի՞նչպէս չպաշտպանել «Ազատամարտի» պաշտպան փաստաբանը, ընկեր Փաշայեանը և ընկեր Փափազեանն ու Գեղամը։ Ի՞նչպէս լքանել Ստեփան Գարայեանը, որ ազատական կուսակցութեան պետն ու վարիչն է։

Ես իմ կողմէս բան մը չպիտի աւելցնեմ վարչութեան մատնուած տագնապին վրայ, այլ պիտի յանձնարարէի կարդալ Թիւրքահայ ամենէն ծանրաբարոյ ու ամենէն լուրջ ու վերապահ ուղղութեան հետևող «Բիւզանդիոնի» այս պատմական նիստին մասին գրածը, որ իրական ու իսկական գաղափար մը կուտայ ժողովին մասին։

Շառայլ

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ղուրանը նոր տպագրութեամբ.—Ինչպէս հաղորդում է «Vossische Zeitung»-ը, Կ. Պոլսում այս օրերս լոյս է տեսել Ղուրանի առաջին թիւրքերէն թարգմանութիւնը։ Ինչպէս յայտնի է, մինչև այժմ Ղուրանի թարգմանութիւնները արգելվում էին, ինչպէս կրօնը վիրաւորող հանգամանք։ Անգամ Ղուրանին կից պարունակվող թիւրքական կօմենտարիաները հրատարակվում էին արաբերէն։

Իր նախաբանի մէջ թարգմանիչը մատնանշում է, որ դրա շնորհիւ ժողովրդի մէջ գաղափար նոյն իսկ չը կար իսլամի հիմունքների մասին։ Մինչև անգամ նրանք, որոնք սովորում էին արաբերէն, մեծ մասամբ կարող են կանոնաւոր բացատրել առանձին տառերը, բայց ոչ մի հասկացողութիւն չունեն կրօնի էութեան մասին։ Չը նայած թիւրքական Ղուրանի «յեղափոխականութեան», նոր թարգմանութեան դէմ տակաւին ոչ մի բողոք չէ լսվում։

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Լոնդոնում մի քանի հարիւր հազար կազմակերպված բանւորների մասնակցութեամբ կայացաւ ցոյց Հարաւային Աֆրիկայում տեղի ունեցած դէպքերի առիթով։ Հռետորները ցասումով խօսեցին գեներալ Բօտայի կամակորութեան և Ասկվիտի կառավարութեան դէմ։

◆ «Рус. Сл.»-ին հեռագրում են Թիֆլիսից, որ Սասունում քիւրդերը նորից սպանում են հայերին։ Յուզիչ տրամադրութիւնը ուժեղանում է նրանով, որ 1894 թ. Սասունի նշանաւոր ջարդի կազմակերպիչ Մէհիր-Բէգրի-փաշան ներկայումս հրամանատար է Բիթլիսի զինուորական շրջանի, որի կազմի մէջ մտնում է և Սասունը։

◆ Գերմանական և աւստրիական լրագիրները շարունակում են միաբերան թմբուկ զարնել Ռուսաստանի ռազմական պատրաստութիւնների մասին։ Բերլինի օրէնսգէտները կարծում են, որ ռուս-գերմանական պատերազմի դէպքում գերմանական կառավարութիւնը իրաւունք ունի գրաւել ռուսական այն գումարները, որ ռուսաց ֆինանսների մինիստրութիւնը պահում է գերմանական բանկերում։

◆ Մարտ ամսին ռուսաց զօրքերը դուրս են գալու Հիւսիսային Չինաստանից։

◆ Պրինց Վիդը Էսադ-փաշային է յանձնել կազմել ալբանական մինիստրական կաբինէտ։

◆ Աւստրիան և Գերմանիան եռանդով բանակցութիւններ են վարում Ռուսաստանի սպառազինման դէմ միջոցներ ձեռք առնելու մասին։

◆ Թէհրանից հեռագրում են, որ պարսից էկս-շահ Մահմէդ-Ալին մեծ աջակցութիւն է ստանում գերմանական կառավարութեան կողմից։

◆ Բալկաններում, Պետերբուրգում ստացված տեղեկութիւնների համաձայն, նոր բարդութիւններ են սպասվում։ Ռուսաստանում հաւատացած են, որ թիւրք-բուլղարական դաշնակցութիւն գոյութիւն ունի։ Պետերբուրգում այն կարծիքն է տիրում, որ նոր պատերազմի դէպքում Թիւրքիայի բաժանումը անկասկած է։

◆ Թիւրքաց զինուորական մինիստր Էնվէր-փաշան պսակվեց սուլթանի քրոջ աղջկայ հետ։ Ներկայ էին կայսերական պրինցները, մինիստրները և գերմանական միսսիայի անդամները։

◆ Կ. Պոլսից հեռագրում են. «Կ. Պոլսի շրջակայքում զբօսնում էր գեներալ Սանդերսի դուստրը մի գերմանացի օֆիցէրի հետ։ Նրանց վրա յարձակվեցին երեք թիւրք զինւոր, որոնք օֆիցէրին լաւ գանակոծեցին, իսկ աղջկան ծանր վիրաւորանքներ հասցրին։ Զինւորները յայտնագործվեցին և յանձնվեցին դաշտային դատարանին։ Լուրերի համաձայն, նրանց արդէն կախել են։ Լրագիրներին արգելված է գրել որևէ բան այդ մասին»։

◆ «Р. Сл.»-ի ասելով, մարտի սկիզբներին մի առանձին մասնաժողով է կազմված արդարադատութեան մինիստրի օգնական Վերեօվկինի նախագահութեամբ Կովկասի տեղացի ազգաբնակութեան համար դատարանի բարենորոգման հարցը քննելու։

◆ Ռուսաց գրական ընկերութիւնը բողոքեց Շեվչէնկոյի ծննդեան 100-ամեակը տօնելու արգելքի դէմ և որոշեց նոյեմբերին գումարել ժուռնալիստների համագումար մամուլի կառավարական օրինագծի քննութեան համար։

◆ Մի ռուս յայտնի պաշտօնեայ յայտնել է, որ գարնանը Մակլակովին յաջորդելու է Կրիվօշէինը, որ դառնալու է պրեմիէր և ներքին գործերի մինիստր։

ՋԱՌԱՄԵԱԼ ԴՐՈՒԹԻՒՆԸ, արտէրիօսկլէրօզը, յոգնածութիւնը, հիւանդութիւնների հետևանք ընդհանուր թուլութիւնը, ալկօհօլիզմի հետևանքները եւ այլն, նէվրաստէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, հիծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկւում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ“ անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանօտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք.

Профессоръ Д-ръ Пель и С-вья
С-Петербургъ.
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. Դրան

(П. 8663) 0—2

№ 2

◆ Պետերբուրգում այս օրերս նորից տեղեկութիւն անցաւ, որ ժող. լուս. մինիստր Կասսօյի հրաժարականը ընդունվել է վերջնականապէս։ Կասսօյի տեղ մինիստր է նշանակվում Պետերբուրգի ուսումն. շրջանի հոգաբարձու Պրուտչենկօն, որ վայելում է բարձր խաւերի համակրութիւնը։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ էկս-սուլթան Աբդիւլ-Համիդի առողջական դրութիւնը անյուսալի է. նա ուշաթափված է. ամեն րոպէ սպասվում է նախկին բռնակալի մահը։

◆ Պարիզում կնքվեց Թիւրքական 500 միլիօն ֆրանկի փոխառութիւն։

◆ Ֆրանսիական «Times»-ը կարծում է, որ գերմանական մամուլի սկսած արշաւանքը Ռուսաստանի դէմ ներշնչված է գերմանական կառավարութիւնից։ Այդ հանգամանքում լրագիրը տեսնում է ռուսատեաց քաղաքականութեան ուժեղացումն ամբողջ Գերմանիայում։

◆ Բուխարայի կառավարութիւնը 150,000 րուբլի է յատկացրել այս տարի մորեխի դէմ կռւելու համար։

◆ Չինական կառավարական զօրքերը շարունակում են» կատաղի կռիւ մղել «սպիտակ գայլերի դէմ»։ Փետրվ. 13-ին «սպիտակ գայլերից» կռւի դաշտում ընկել են 2000 հոգի։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ապակեայ հիւանդանոց. — Վերջերս Ֆիլադելֆիայում տեղի ունեցաւ՝ թերևս աշխարհում միակ հիւանդանոցի հանդիսաւոր օծումը, հիւանդանոց, որին իրաւամբ կարելի է անուանել ապակեայ։ Նա բաղկացած է ութը պաւիլիօնից, որի միայն անցքերը շինված են պողպատից, իսկ պատերը և առաստաղը ամբողջապէս ապակեայ են։ Հիւանդանոցում գտնվող ամեն մի հիւանդ բոլորովին առանձնացված է։ Շէնքի օդափոխութիւնը կատարվում է նոր սիստեմով՝ էլեկտրականութեան օգնութեամբ։ Հիւանդանոցում առանձին յարմարութիւններ են շինված օզօնա ստանալու համար, որին այժմ Ամերիկայում մեծ նշանակութիւն է տրվում թոքախտաւորներին բժշկելու դէպքում։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը (Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

**ԲԱԳՈՒ.**—Արագ գնացքը № 6—10 ժ. 16 ր. առ. հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ. Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.: **Պօստատար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.: Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.:

**ԲԱԹՈՒՄ.**—Պօստատար գնացքը № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլովո 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլովո 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլովո 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.: **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլովո 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.:

**ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.**—Պօստատար գնացքը № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.: **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.:

**ԲՈՐԺՈՄ.**—Մարդատար գնացքը № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

**ԲԱԳՈՒԻՑ.**—Արագ գնացքը № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.:

**ԲԱԹՈՒՄԻՑ.**—Պօստատար գնացքը № 4—9 ժ. 16 ր. երեկ.: **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.: **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.:

**ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.**—Պօստատար գնացքը № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.:

**ԲՈՐԺՈՄԻՑ.**—Մարդատար գնացքը № 17/18—11 ժ. 7 ր. եր.: **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ 38 ր. առ.:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.:
Մ. Գ. ԱՌԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերաբուժութեան և միզասեռ. հիւ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՌԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—23

ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆԸ
Գործ են ածում ամենքը, որոնք գիտեն գնահատել գեղեցկութիւնը։
Միակ գործարանատէր
ՖԵՐԴ.
ՄՈՒԼԴԵՆՍ
Պարֆիւմէրիա
№ 4711.
Կէօլն. Րէյն.
հիմն. 1792 թ.



Շնորհիւ իր մէջ պարունակող մեծ քանակութեան գլիցէրինի, «№ 4711 վարդի բիւրեղեայ սապօնը» կանօնաւոր գործածողները պարտական են նրան իրանց՝ պատանեկան հասակին յատուկ՝ երեսի գոյնով, թաւշի նման կակուղ, մաքուր և քնքոյշ կաշիով, որոնք իսկական գեղեցկութեան նշանաբանն են կազմում։

Զարմանալի կակուղ փրփուր։ Հիանալի հոտ։ Մեծ տնտեսութիւն։ Իսկականը միայն բոլոր պետութիւն. յայտաբար. «№ 4711» մարկայով։

(M. 544862) 16—8

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.: Էլեկտրոտէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—12

ՍՏՕՄԱՏՕԼ
ԱՏԱՄԻ ԿՐԷՄ
Ատամները պահում է առողջ, ամուր և սպիտակ դրութեան մէջ։
Գինը 35 կոպ.
ՍՏՕՄԱՏՕԼ ԸՆԿ.
ՍՏՕԿՀՕԼՄՈՒՄ.
Պահեստը Կովկասեան Ընկ. Դեղային Ապրանքների խանութում։
(M. 50490) 8—2

ՕԳՏՎԵՑԷՔ 50% զեղչ ԴԷՊՔԻՑ
Վաճառվում են ԱՏՐՊԵՏԻ հետևեալ աշխատութիւնները

| | | |
|---|---|---|
| Պատկերներ Թիւրք. կեանքից. | 1 ր. | — |
| Վիւքելայի գաղտնիքը. | 1 ր. | — |
| Սլմաստ, վէպ. Բարձր-հայոց կեանքից, հ. Ա. և Բ. | 2 ր. | — |
| Ջաւահիր, վէպ. վերջին ռուս-թիւրք պատերազմի | 1 ր. | — |
| Վիպակներ. | 1 ր. | — |
| Բժժանքներ. | 1 ր. | — |
| Պատուհասներ Իրանի | 1 ր. | — |
| Շուշան. | 1 ր. | — |
| Խիւլաֆաթ. | — | 50 կ. |
| Դիմակներ. | — | 50 կ. |
| Ժառանգներ. | — | 30 կ. |
| Բերսայի Սառքելը. | — | 25 կ. |
| Շէյնոց. | — | 30 կ. |
| Անուրջներ. | — | 15 կ. |
| Տէյենի որդին — | — | 15 կ. |
| Հատուածներ Հաֆիզից. | — | 25 կ. |

Վերոյիշեալ գրքերը փոխանակ 11 ր. 40 կոպէկի, վաճառում եմ 5 ր. 70 կ., առանց ճանապարհածախսի։ Գրավաճառներին առանձին պայմանով։ Դիմել. Тифлисъ, Арташесу Махатчеву, Орбеляновская ул. № 20.
164. 2—2

Իւրի Վեսելօվսկիի աշխատութիւնները.
«Армянскій поэтъ С. Шахъ-Азизъ». (Критич. этюдъ и стихотворные переводы. Иллюстраціи худ. В. Суреньянца) . . . . . . . գինը 1 ր 50 կ.
«Литературные Очерки» (Шестидесятые годы и армянскій журналъ въ Москвѣ», «Западное вліяніе въ литературѣ русскихъ армянъ», Шиллеръ, Байронъ, Два глашатая терпимости, и др.) . . . . . . գինը 2 ր.
«Армянская Муза» (въ сотруднич. съ проф. Гр. Халатьянцомъ; до 90 стихотвореній въ переводѣ Бальмонта, Бунина, Бѣлоусова, Чюминой, Ю. Веселовскаго и др.) գ. 1 ր.
«Русское вляніе въ соврем. армянской литературѣ» (Сундукьянцъ, Ованнисьянъ, Цатуріянъ, Лео, Ширванзадэ, Агароньянъ, Чубаръ и др.) . . գինը 50 կ.
Հասցէն՝ Москва, Набережная Храма Спасителя, д. Куракиной, кв. 40, Юрію (Георгію) Алексѣевичу Веселовскому. (հ. կ.) 165. 3—1

ԱՇԽԱՐՀԷ ԱՇԽԱՐՀ
ԿԱՄ
20,000 ՎԵՐՍՏ ԵՒՐՕՊԱՅՈՒՄ
Գեղարուեստական ուղևորութիւն
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
Ուսումնասիրութիւններ և տպաւորութիւններ (Բազմաթիւ պատկերներով)։
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
Հատոր առաջին
Պոնտոսի կովկասեան ափերը.—Բաթում, Սուխում, Նոր-Աֆօն, Նովօրօսիյսկ։
Ղրիմ.—Թէօդօսիա, Սիմֆէրօպօլ, Բախչիսարայ, Եալտա, Սեւաստօպօլ։
Միջին Ռուսաստան.—Եկատերինօդար, Ռօստով, Նոր-Նախիջևան, Մինսկ, Սմօլենսկ։
Ցարերի մայրաքաղաքները.—Մոսկվա, Պետերբուրգ։
Ֆինլանդիա.—Վիբօրգ, Իմատրա, Հէլսինգֆօրս, Աբօ։
Լեհաստան.—Վարշավա, Լիտօվսկ։
Հատոր երկրորդ
Շուէդիա.—Ստօքհօլմ, Ուպսալա, Մալմօ, Տրէլլբօրգ։
Պրուսիա.—Բերլին, Հանօվէր, Օսնաբրիւկ, Հալլէ, Բրեսլաու։
Սաքսօնիա.—Լայպցիգ, Դրէզդէն։
Աւստրիա.—Լեմբէրգ, Կրակօւա, Վիէննա, Պրագա։
Հատոր երրորդ
Իտալիա.—Ուդինօ, Վենետիկ, Վերօնա, Բօլօնիա, Ֆլօրէնցիա, Հռօմ, Նէապօլ, (Պօմպէյ և Վեզուվ) Գենուա, Միլան։
Զվէյցարիա.—Լօզան, Ժընեվ, Մօնդրէ, Զիլիօն։
Հատոր չորրորդ
Ֆրանսիա.—Լիօն, Դիժօն, Պարիզ, Կալէ։
Անգլիա.—Դուվր, Լօնդօն։
Հատոր հինգերորդ
Բէլգիա.—Օստանդ, Բրիւսէլ, Անտվերպէն։
Հօլլանդիա.—Ռօտէրդամ, Հաագա, Ամստէրդամ, Զաանդամ։
Ամբողջ գործը կազմում է մօտ 2000 երես «Գեղարուեստի» դիրքով։
ԳԻՆԸ 25 ՌՈՒԲԼԻ
Բացված է բաժանորդագրութիւն առաջին հատորի համար—4 ՌՈՒԲԼԻ։
Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Гарегину Левонянъ. Արտասահմանից՝ Tiflis (Cauca Russie) G. Lévonian.
Թիֆլիսում բաժանորդ են գրվում «Գեղարուեստի» խմբագրատանը (Большая Ванская № 4), ինչպէս և «Cafe Central» սրճարանում, Երևանեան հրապարակ։
(Ե.) 145. 10—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный